


Աստված Իրեն Նույնացնում Է Իր Բնութագրերով

 Ես մի քիչ զարմացա՝ տեսնելով ընկերոջս՝ Ջոզեֆ Բուոզեյին այնտեղ, և շրջվեցի ու մի քիչ ժամանակ հատկացրեցի նրա ձեռքը սեղմելու համար:

² Այժմ անդրադառնանք Աստծո Խոսքին, Եբրայեցիների թուղթ, առաջին գլուխ: Ուզում եմ կարդալ 1-ին, 2-րդ և 3-րդ համարներն այս երեկոյի համար թեմա վերցնելու համար:

Աստված, որ շատ անգամներ, շատ կերպերով սկզբից խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով,

այս վերջին օրերում մեզ հետ խոսեց Իր Որդու միջոցով, Ում ամեն բանի ժառանգ կարգեց, Ում միջոցով նույնպես աշխարհներն ստեղծեց,

Որն Իր փառքի լույսն ու Իր Էության ստույգ արտահայտությունը լինելով և ամեն ինչ Իր գործության Խոսքով պահելով, երբ...նստեց բարձունքներում՝ Մեծության աջ կողմում...

³ Այժմ խոնարհենք մեր գլուխները աղոթքի համար: Եվ հիմա Նրա աստվածային ներկայության մեջ եթե ունեք որևէ խնդրանք, որը կուզենայիք հայտնել Նրան, պարզապես բարձրավցրեք ձեր ձեռքը, և դա ձեր խնդրանքն է, որ Աստված...

⁴ Մեր Երկնայի՛ն Հայր, մենք հիմա գալիս ենք Քո գահի առջև հավատով Հիսուս Քրիստոսի՝ Քո Որդու Անունով: Մեզ տրված է եղել այս վստահությունը, որ «Եթե մենք Նրա Անունով մի բան խնդրեք, կշնորհվի մեզ»: Եվ Դու գիտես մեր փափագներն ու կարիքները, և խոստացել ես, որ կհոգաս այն ամենի համար, ինչի կարիքը որ մենք ունենք: Ուստի Հայր, մենք կաղոթենք այնպես, ինչպես Դու ես մեզ սովորեցրել. «Քո թագավորությունը գա, Քո կամքը լինի, ինչպես երկնքում՝ այնպես էլ երկրի վրա»: Դա է մեր խնդրանքն այս երեկո, թող Քո

ցանկության համեմատ դա տրվի, և շնորհիք մեզ այս առանձնաշնորհումները: Օժի՛ր Խոսքը, Տե՛ր, ինչպես նաև բոլոր խոսողներին ու լսողներին, և թող Սուրբ Հոգին մտնի և Խոսքի իրագործողը դառնա մեր մեջ այս երեկո: Որովհետև մենք դա խնդրում ենք Նրա Անունով: Ամեն:

Նստե՛ք:

5 Ինչպես հասկացա վաղը առավոտյան Ամբողջական Ավետարանի Ձեռներեցների նախաճաշ է լինելու: Սովորաբար այնտեղ, ուր նրանք մասնաճյուղ ունեն, ես առանձնաշնորհում ունեմ խոսելու նրանց նախաճաշի ժամին: Ներկա պահին դա միակ կազմակերպությունն է, որը կազմակերպություն չէ, այլ միակ խումբն է, որին ես, ես պատկանում եմ, դա Քրիստոնեական Ձեռներեցներն են: Եվ հիմա ես քարոզում եմ նրանց համար միջազգային մակարդակով:

6 Հիմա, այս երեկո մենք հավատում ենք, որ այս հանդիպումը գուր չի լինի: Ես ձեզ մոտ եկել եմ հոգնած, կտրված ձայնով և մի փոքր հիվանդացել եմ բրոնխիտով...

7 Եկել եմ Թուրքսոնից, որտեղ շատ լավ ու չոր եղանակ է, եկել եմ այստեղ, այստեղ էլ շատ լավ ու խոնավ է, ուստի տարբերությունը մեծ է: Եթե դուք հավաքեք այստեղի բոլոր ջրերը, եթե ուղարկեիք դա մեզ մոտ, մենք դա բարձր կգնահատեինք: Բայց դուք, անշուշտ, չեք կարող դա անել:

8 Բայց ես ձեզ մի բան կասեմ, դրա մեջ առակ կա: Արիզոնայում մեր, մեր, մեր ամեն ինչը՝ մեր ծառերը, լի են փշերով: Ամեն ինչ փշոտ է: Պատճառը չոր եղանակն է: Եթե այդ նույն թուփը հիմա աճեր այս կողմերում, նուրբ գեղեցիկ տերևներ կունենար: Հասկանում եք, այն առանց ջրի է, դրա համար էլ վերածվում է փշի:

9 Եկեղեցին էլ երբ մնում է առանց Կյանքի Ջրի նույնպես դառնում է չոր ու փշոտ՝ կպչելով և ծակելով ամեն ինչ: Բայց այնտեղ, ուր Կյանքի ջրերն են հոսում, բացում են այդ տերևը և դարձնում են այն նուրբ, հաճելի և քաղցր, սուրբ և հաճելի Աստծո համար: Ուստի թող Տե՛ր Աստվածը ջրի մեզ այսօր, որ փշեր չլինենք՝ այլ մենք գեղեցիկ տերևներ կլինենք, որպեսզի մոլորված մարդիկ կարողանան նստել մեր ծառի ստվերի տակ և հանգստություն գտնեն իրենց հոգիներին:

10 Հիմա ես ուզում եմ այս երեկոյի համար վերցնել թեմա, եթե Տերը կամենա, և այս խոսափողը կքաշեմ որքան հնարավոր է մի փոքր մոտ, ձայնիս պակասի

պատճառով: Ուզում եմ, այստեղ՝ Եբրայեցիների թղթի 1.1 համարի ընթերցածից, ուզում եմ ընտրել թեմա՝ «Մատված Իրեն նույնացնում է Իր բնութագրերով»: Ես, հավանաբար, ևս մեկ անգամ կրկնեմ, որովհետև գիտեմ, որ լսելիականությունն այստեղ վատ է: Մատված Իրեն նույնացնում է Իր բնութագրերով:

¹¹ Հիմա, գրեթե ամեն ինչ նույնացվում է իր հատկանիշներով: Եվ այստեղ ես ունեմ սուրբգրային մի քանի հատվածներ, որոնք ես...և նշումներ, որոնցից կուզենայի հղումներ անել: Հիմա, ինչ-որ մի բանի բնութագիրը ցույց է տալիս, թե ինչ է դա:

¹² Հիմա, ինչպես ողջ բնության մեջ, ծաղիկները շատ ժամանակ բնորոշվում են իրենց հատկանիշով: Եթե նրանք մոտ են իրար, մեկի ուղղվածությունը մյուսին, այդ ծաղիկի բնութագրումը ցույց կտա, թե ինչ տեսակի ծաղիկ է դա: Վայրի բնության մեջ էլ հաճախ...

¹³ Ես, ես որսորդ եմ: Եվ դու պետք է իմանաս առանձնահատկությունը կենդանու, որին որսում ես, այլապես երբեմն կարող ես խաբվել: Օրինակ՝ ինչպես քարե ոչխարները Բրիտանական Կոլումբիայում: Այս աշուն ես Յուկոնի տակ էի, մի քանի եղբայրներ, ովքեր հիմա այստեղ են, ինձ հետ էին, և մենք որս էին անում:

¹⁴ Հիմա, եթե դու չիմանաիր տարբերությունը ոչխարին կամ եղնիկին հետապնդելիս՝ չէիր կարողանա տարբերել, եթե հմուտ որսորդ չլինեիր: Որովհետև նրանք նույն հետքերն են թողնում՝ ցատկում են փախնելիս: Եվ հետո դու տեսնում ես, որ մեկը կանգնած է որոշակի հեռավորության վրա՝ գլուխը թաքցրած, դու, դու հագիվ թե տարբերությունը իմանաս: Հետևի մասով նրանք գրեթե նույն չափի են, սպիտակ են ինչպես եղնիկը: Շատ դժվար կլինեիր տարբերել նրանց: Բայց նրա եղջյուրները բացահայտում են նրա յուրահատկությունը, իրենց եղջյուրների միջոցով: Այծը կյոր եղջյուրներ ունի, իսկ եղնիկը՝ ճյղավորված: Եվս մեկ բան՝ եղնիկը այդ բարձրության վրա չի ելնի՝ կեր հայթայթելու համար:

¹⁵ Եվ հետո, այծը քայլում է...այծը նույնպես, ինչպես և ոչխարը յուրահատկություն ունի, ինչը պետք է իմանաս, թե որն է նրանց միջև եղած տարբերությունը, երբ բարձունքում ես, որովհետև նրանք երկուսն էլ սպյում են բարձր լեռներում: Պետք է տարբերությունն իմանաս: Բայց եթե նկատել եք, այծը սայթաքում է

քայլելիս, մինչդեռ ոչխարն *այսպես է* ոտքերը դնում: Բնութագիրը, թե ինչպես է նա պատրաստում իր ուղիւն: Դուք սահմանում եք ձեր որսը՝ ելնելով այն յուրահատկություններից, թե ինչ է նա անում, ինչպես է վարվում, ինչով է սնվում և այլն: Դա բնորոշում է իրեն իր իսկ յուրահատկություններով: Իսկ հետո անում էս այնպես, որ նա ցատկի, և հետևում էս, թե ինչ կկատարվի, կարող էս ասել նրա ցատկելու միջոցով: Դու կարող էս ասել այդ բնութագրով կենդանիների միջև եղած տարբերությունը:

¹⁶ Եվ հետո, երբևէ ուշադրություն դարձրել էք, էս չգիտեմ կան դրանք ձեր մոտ թե ոչ, ոսկեգույն փայտփորիկներ, դե, փայտփորիկը նրանց ճիշտ անունն է, և ճայր: Ճայր մոտավորապես ոսկեգույն փայտփորիկի չափսի թռչուն է: Եվ երբ որ դու տեսնում էս նրանց երկուսին թռչելիս, նրանք երկուսն էլ մոտավորապես նմանատիպ թռչուններ են: Եթե դու գույնը չես տեսնում, այլ միայն տեսնում էս նրանց, կարող էս ասել, թե որն է ոսկեգույն փայտփորիկը: Ճայր թռչում է շատ թե քիչ ուղիղ գծով: Իսկ ոսկեգույն փայտփորիկը թափահարում է թևերը. քանի որ նա թափահարում է թևերը, իջնում է ներքև, հետո վեր է բարձրանում, ներքև հետո վերև: Հասկանում եք, *այդպես* նա կարծես թե վեր է ցատկում, և նրա թռչելու ձևով դու կարող էս ասել, որ դա ոսկեգույն փայտփորիկի յուրահատկությունն է:

¹⁷ Եթե ուշադրություն եք դարձրել լորուն, երբ թռչնում է, թե ինչպես է օդ բարձրանում: Ճահիճի մեջ գտնվելու ժամանակ հետևե՛ք, որտեղ լորին ու մորակտցարը կարող են լինեն: Դուք որսորդներդ դա գիտեք: Ուլիստնի մորակտցարը և Ջեքի մորակտցարը, նրանք բնորոշվում են իրենց դուրս գալու և թռչելու եղանակով: Նրանք բնորոշվում են իրենց թռչելու հատկանիշով, թե ինչ տեսակի թռչուն են նրանք: Դրա համար եթե դուք պարզապես լսել եք նրանց, ապա կարող եք որոշել, թե դա ինչ էր նրա թռնելու եղանակից, թե ինչ է դա, նրա թռչելու բնորոշ հատկանիշներով:

¹⁸ Տղամարդկանց և կանաց պես: Նրանք երկուսն էլ մարդկային էակներ են, բայց կնոջ և տղամարդու հատկանիշները տարբեր են: Վերջերս այստեղ կարդում էի Սողոմոնի և թագուհու մասին: Ես այստեղ երբեք չեմ քարոզել ձեզ իմ փոքրիկ Պատգամը հարավի թագուհու մասին, որ եկավ Սողոմոնի մոտ և տեսավ այդ

զանազանության պարզեր: Վերջերս ես դրա մասին էի կարդում, և այնտեղ ասվում էր, որ «հանելուկներից մեկը, որ դրվեց Սողոմոնի առջև, այն էր, որ այդ թագուհին վերցրեց կնոջը, կամ կանանց, և հազցրեց նրանց տղամարդու նման»:

¹⁹ Հիմա, այդ ժամանակ դա օտար էր, բայց, անշուշտ, այսօր սա վերանայվել է: Եվ, և դուք գիտեք, որ դա սխալ է: Աստվածաշունչն է ասում, որ կինը չպետք է անի այդ: «Կնոջ համար գարշելի է հագնել տղամարդու համար նախատեսված հագուստը»: Եվ դա անփոփոխ Աստված է ասել, ուստի դա ճշմարտություն է:

²⁰ Եվ այսպես, մենք պարզում ենք, որ Սողոմոնը ընդամենը հետևում էր նրանց, ասաց նրանց, որ քայլեն կամ ինչ-որ մի բան անեն, և անմիջապես ասաց. «Մրանք կանայք են»: Տեսնում եք, նա կարողացավ այդ կնոջ բնութագրով, իր վարվելալակերպի միջոցով ասել, որ ինքը կին էր, և ոչ թե տղամարդ:

²¹ Եվ հետո, ամեն բան այդպես է իր հատկանիշներով: Ճիշտ այնպես, ինչպես շատ մարդիկ ձախիլի ու աչիլի են: Նրանք ունեն իրենց վարվելակերպն բնորոշ առանձնահատկություն: Իրենց պահվածքից, իրենց աջ կամ ձախ ձեռքը պարզելու միջոցով կարող եք ասել, թե արդյոք սա աչիլի թե ձախիլի անձնավորությունն է:

Եվ հիշե՛ք, Հիսուսը դրա նման մի բան ուներ, որ...

²² Երկու ձեռքերը գրեթե...Նրանք նույնն են: Ունեն նույն տեսակի բուրբ մատի հետքեր, մատնա հետքեր, հինգ մատեր՝ ճկույթ, ցուցամատ և այլն: Ճիշտ այնպես, ինչպես աջ ձեռքը, ձախն ունի նույն տեսակի մատներ, սովորաբար, իսկ և իսկ նույն չափի ձեռք է: Նրանց միջև եղած միակ տարբերությունն այն է, որ մեկը ձախ է, մյուսը՝ աջ: Դա միակ տարբերությունն է, որը դուք կարող եք նշել: Մեկը ձախ է, մյուսը աջ:

²³ Դրա համար Հիսուսն այնտեղ ասաց...Ես այստեղ կարող էի մի փոքր կետ դնել: Հիսուսն ասաց Մատթ. 24 համարում. «Վերջին օրերում Հոգու հատկանիշները որոշ չափով նման, իրար այնքան մոտ կլինեն, որ եթե հնարավոր լիներ, ընտրյալներն էլ կմոլորվեին»:
Հասկանում եք, նրանք պարզապես...

²⁴ Վերցրեք և պարզապես բարձրացրեք ձեր ձեռքը: Տեսնում եք, եթե չնկատեք, բոլոր առումներով նրանք իրար նման են, բայց նրանցից մեկը ձախ է, իսկ մյուսը աջ:

25 Ահա թե ինչպիսին են հոգիները վերջին օրերում: Նրանք որոշ չափով նման են, սական ունեն բնութագիր, որը բնորոշում է նրանց: Մեկը ճիշտ է, իսկ մյուսը սխալ, և դա հնարավոր է պարզել իրենց հատկանիշով:

26 Աստծո շնորհի կարելի է ճանաչել Նրա հատկանիշով: Հասկանում եք: Աստծո շնորհի և եկեղեցու հոգին: Կա եկեղեցու հոգի, իսկ Աստծո շնորհի բացարձակ նման չէ եկեղեցական հոգուն, ընդհանրապես:

Կա հարանվանական հոգի:

27 Կա ազգային ոգի: Կա ազգի ոգի: Ամեն ազգ, երբ ես գնում եմ այնտեղ, երբ դուք ուղևորվում եք այնտեղ, տարբեր ոգիներ ես հայտնաբերում: Գնացի Ֆինլանդիա, հրաշալի մարդիկ են, բայց այնտեղ Ֆինլանդական ոգին էր: Գնացի Գերմանիա, այնտեղ գերմանական ոգին է:

28 Վերջերս՝ երբ դեռ ապրում էինք Ինդիանայում մի քանի տարի առաջ, կնոջս հետ միասին գնում էինք փոքրիկ սուպերմարկետ: Նոր էի տուն վերադարձել: Պետք է գնայինք սնունդ գնելու: Եվ այնտեղ գնալու ճանապարհին մենք...Ամռանն էր, կարող է դրան չհավատաք, բայց մենք շրջագգեստով մի կին գտանք: Եվ դա այնքան տարօրինակ էր, ես...Դա ինձ ապշեցրեց: Ես, ես ասացի. «Նայի՛ր այնտեղ, դա տարօրինակ է թվում, որ այդ կինը շրջագգեստով է»: Մնացածները հագել էին հագուստներ, որոնք չ...կնոջը վայել չեն: Եվ, և նա ասաց...Ես ասացի. «Դե, դա ուղղակի ամերիկյան ոգին է, հասկանում ես, Ամերիկայի ոգին է»:

29 Հիմա, Ամերիկայի ոգին, դա...ենթադրվում էր, որ քրիստոնյա ազգ կլինի, բայց այս ազգի հոգին քրիստոնեական չէ: Այն կարող է քրիստոնեական ազգ կոչվել, բայց նա բնութագրով կիլոմետրերով հեռու է դրանից: Ուստի այդ կինը, ես ասացի...

Նա ասաց. «Դե, մի՞թե մենք ամերիկացիներ չենք»:

30 Ասացի, ես ասացի. «Ո՛չ: Մենք ապրում ենք այստեղ: Մա մեր երկիրն է: Մենք, մենք, մենք ապրում ենք այս հողում: Միրում ենք այն: Մա աշխարհի լավագույն ազգն է: Բայց և այնպես, մենք ամերիկացիներ չենք»: Ես ասացի. «Մենք ծնված ենք Վերևից: Սուրբ Հոգին իջավ, և մենք պատկանում ենք Թագավորությանը: Դա այս աշխարհից չէ»: Ես ասացի. «Այդ է պատճառը, որ մեր քույրիկները կրում են զգեստներ, երկար մագեր են կրում և չեն չպարվում: Տեսնում եք, նրանց հատկանիշները

դրսևորում են նրանց որպես «սրբություն Տիրոջը» Վերևից»:

³¹ Դրա համար ենք մենք Թագավորություն որոնում: Մենք որոնում ենք Թագավորին, ով գալու է և տանելու է Իր հպատակներին Նրա թագավորության մեջ: Եվ նրանք ճանաչված են իրենց, իրենց հատկանիշներով, որ նրանց գանձերը այս երկրից կամ այս ազգից չեն: Այն վերևից է, փառքի մեջ: Դրա համար. «Նրանք սպասում են այն քաղաքին, Որի ճարտարապետը և արարիչն Աստված է»: Նրանք պատշաճորեն նույնացած են:

³² Կուզենայի բավական ձայն ունենայ, որ ողջ գիշեր քարոզելի ձեզ համար: Բայց ես, ես այն կորցրել եմ: Հիմա, ճանաչվում է իր հատկանիշներով:

³³ Մենք այստեղ լավ օրինակ ենք գտնում Իսրայելի ժամանակներում, երբ գալիս էին խոստացված երկիր: Աստված նրանց կանչել էր Իր խոստումի համաձայն: Նա ասել էր Աբրահամին, որ Ինքը...իր սերունդը չորս հարյուր տարի պանդուխտ է լինելու այդ օտար երկրում, և հետո Նա շատ գորավոր բազուկով ազատելու է նրան: Հետո նրանք գնալու են մի եկրիր, խոստացված էր, որտեղ կաթ ու մեղր էր բխում: Այնուհետև երբ խոստումի ժամը մոտեցավ, եկավ մի Փարավոն, որը չէր ճանաչում Հովսեփի հզոր ծառայությունը, որը նա ունեցել էր նրանց մեջ:

³⁴ Եվ այս...Աստված Մովսես անունով մի մարգարե վեր հանեց: Այս մարդը սովորել էր եգիպտացիների ողջ իմաստությունը: Կասկած չկա, որ նա հզոր, խելացի և ինտելեկտուալ մարդ էր, որովհետև կարող էր եգիպտացիներին իմաստություն սովորեցնել: Կարծես համապատասխան պիտանի մարդ էր, որը հարմար էր ազատագրման համար:

³⁵ Բայց հասկանում եք, այն, ինչ մենք անվանում ենք ազատագրում, և այն, ինչ Աստված է անվանում, տարբեր է:

³⁶ Հիմա հետևե՛ք այդ մարդուն իր ողջ բարոյական սկզբունքներով հանդերձ: Նա գիտեր, որ ինքը ծնվել էր Իսրայելի որդիներին ազատելու համար: Մինչդեռ իր ողջ կրթությամբ հանդերձ, այսինքն՝ իր ողջ իմացածով, իմանալով նաև, որ կանչված էր Աստծո կողմից այդ գործն անելու համար, ուներ իր ողջ...Ուներ՝ հումանիտար գիտությունների

բակլավլրի աստիճան, փիլիսոփայության դոկտորի, իրավաբանական գիտությունների դոկտորի աստիճան և այլն: Եվ երբ դուրս եկավ Իսրայելն ազատելու, ամբողջությամբ ձախողվեց:

³⁷ Հիմա ուշադրություն դարձրե՛ք, թվում էր, թե Եգիպտոսում իր մի ոտքով գահի վրա լինելով՝ Փարավորն դառնալու համար, կկարողանար Իսրայելի զավակներին ազատել, Փարավորն դառնալուց հետո, որովհետև գահի հաջորդ ժառանգորդն ինքն էր: Բայց տեսնում եք, որ այդ ձևով անելով, դա ցույց չէր տա Աստծո բնությունն Իր ժողովրդին ազատագրելու մեջ:

³⁸ Աստված ասել էր, որ ազատելու է նրանց: Եւ «գորավոր բազուկով էր ազատելու նրանց», ոչ թե Մովսեսը գորավոր բազուկով, այլ Աստված գորավոր բազուկով:

³⁹ Մենք տեսնում ենք, որ այս մարգարեն փախնում և քառասուն տարի մնում է անապատում: Քառասուն տարի պահանջվեց Փարավորնից կրթությունը նրա մեջ մխելու համար, քառասուն տարի էլ Աստծուց պահանջվեց դա նրա միջից հանելու համար: Այսպիսով մենք տեսնում ենք, որ մի օր անապատի հետնամասերում նա հանդիպեց Աստծուն վառվող մորենու մեջ՝ Կրակե Սյան տեսքով: Եվ նրան ասվեց, որ կոշիկները հանի, որովհետև այն հողը, որի վրա կանգնած էր, սուրբ էր: Այժմ նայե՛ք այս հրաշալի, կիրթ, կրթված մարդուն, նայե՛ք նրա հատկանիշների փոփոխությանը Աստծուն հանդիպելուց հետո: Եւ արեց ամենա...

⁴⁰ Երբեմն Աստված որոշ բաներն այնպիսի պարզ և անհեթեթ ձևով է անում մարդկային մտքի համար: Ուշադրություն դարձրե՛ք մի մարդու, ով ամբողջությամբ ձախողվել էր. ամբողջ եգիպտական բանակով հանդերձ և ամեն ինչով իր շուրջ՝ Աստծո կամքը կատարելու համար, իր ողջ կրթությամբ հանդերձ, քառասուն տարեկան հասակում: Մհա՛ նա ութսուն տարեկան, հաջորդ առավոտ կնոջ հետ ջորու վրա նստած, երեխան ծնկներին, փայտը ձեռքին գնում էր Եգիպտոսը նվաճելու: Դուք ծիծաղելի՛ տեսարանի մասին եք խոսում: Բայց դա ցույց էր տալիս Աստծո հատկանիշները, որովհետև Եւ ուներ մի մարդ, ով հավատաց Իր Խոսքին: Մհա և վերջ: Բանն այն է, կկարողանաի՞ք պատկերացնել մի մարդու ներխուժումը Եգիպտոս, որտեղ բանակը ձախողվել էր: Բայց ի՞նչ էր դա: Երա բնությունը, նրա

մարտավարությունը փոխվել էր: Նա գնում էր Տիրոջ Անունով. «ԵՄ ԵՄ ՈՐ ԵՄ»: Բանն այն է, որ նա նվաճեց: Նվաճեց, որովհետև գնում էր Տիրոջ գորությունը:

41 Ճանապարհին՝ Իսրայելին դեպի ավետյաձ երկիր առաջնորդելիս, հաղորդակցության մեջ մտավ իր եղբոր՝ իր հարանվանական եղբոր, Մովսրի հետ: Հիմա, Մովսրացիներն ամենևին էլ հեթանոսներ չէին: Դրանք Դավաի աղջկա երեխաներն էին: Մովսրին ծնել էր նրանց երեխաներից մեկը:

42 Հիմա, ես ուզում եմ, որ դուք ուշադրություն դարձնեք այս երկու ազգերին, հակադրությամբ: Այստեղ Եգիպտոսն էր՝ փոքրիկ, ցրված, ո՛չ մի ժողովուրդ չկար գնալու համար, ո՛չ կառավարիչներ կային, ո՛չ թագավոր, ոչինչ, կամ որևէ բարձրաստիճան պաշտոնյա նրանց մեջ, պարզապես մարդիկ էին, որոնք գնում էին խոստացված երկիր: Եվ այնտեղ նրանք պետք է անցնեին Մովսրի երկրով: Այն անմիջապես խոստմունքի սահմանին էր:

43 Մովսրացիները նույնպես հավատում էի Եհովային, և ունեյին մարգարե: Իսրայելն էլ մարգարե ուներ: Նրանք երկուսն էլ մարգարեներ ունեյին:

44 Այժմ ուշադրություն դարձրե՛ք, նրանք հասել էին այն վայրը, որտեղ կազմակերպված ազգի մարգարեն գալիս էր այդ մյուս ազգն անիծելու համար, որովհետև նրանք պարզապես թափառականներ էին՝ չունենալով որոշակի տեղ մնալու համար: Եվ այսպես, նրանք իջան

և հետևեցին այդ երկու մարգարեներին: Ի՞նչ վերաբերում է ֆունդամենտալ դիրքին, ապա նրանք երկուսն էլ միանգամայն ճիշտ էին: Որովհետև ուշադրություն դարձրե՛ք, Բաղասամը՝ եպիսկոպոսն ասաց նրան. «Հիմա ինձ համար յոթ գոհաստեղան կառուցի՛ր»:

45 Յոթը Աստծո կատարելության թիվն է, որը ներկայացնում է եկեղեցու յոթ շրջանները, արարչագործության յոթ օրերը և այլն: Այժմ ուշադրություն դարձրե՛ք, յոթ, Աստված կատարյալ է յոթում:

46 «Յոթ գոհաստեղաններ, և յուրաքանչյուր գոհաստեղանի վրա մի գվարակ դրեց»: Դա ճիշտ նույն գոհաստեղաններ էր, որը նրանք ունեյին Իսրայելի ճամբարում: Նրանք այնտեղ՝ Իսրայելում, այդ նույն գոհաստեղանով, որը սրանք կառուցել էին այստեղ. և նույն գոհաբերությունը՝

զվարակ և զվարակ, մարգարե և մարգարե: Երկու ազգերն հակադրությամբ:

47 Մեր ապրած օրերի շատ հիանալի օրինակ է, եթե ժամանակ ունենայինք դրա մեջ խորանալու: Ուշադրություն դարձրե՛ք, թե Աստված ինչպես է սա առակով ցույց տալիս, որպեսզի մենք հասկանանք՝ գուգահեռներ անցկացնելով:

48 Հիմա, Բաղասամը նույնպես խոյ պահանջեց յուրաքանչյուր գոհասեղանի վրա: Դա խոսում էր գալիք Մեսիայի հանդեպ իր հավատքի մասին: Խոյը՝ ոչխարը, նույն գոհաբերությունն էր, որը նրանք ունեյին Իսրայելում. ներքևում՝ Իսրայելի ճամբարում, այստեղ՝ վերևում... Մովսերում: ...Սկզբունքորեն նրանք երկուսն էլ ճիշտ էին, բայց ուշադրություն դարձրե՛ք, սկզբունքորեն ուսմունքի մեջ:

49 Սակայն մի մարգարեն ներքևում՝ Իսրայելի ճամբարում Աստծո հատկանիշներն ու Աստծո Խոսքն ունեն: Նա մնաց այդ ժամանակաշրջանի համար տրված Աստծո խոստումի հետ, որովհետև նա ուղևորության մեջ էր դեպի ավետյաց երկիր: Հասկանո՞ւմ եք:

50 Հիմա, ինչ վերաբերում է սկզբունքային մասին. Բաղասամը, Բաղակը կարող էին ճիշտ այնպես նույնացվել, ինչպես Մովսերը:

51 Բայց տեսնում եք, Մովսերը՝ լինելով Աստծո ճիշտ մարգարեն, ոչ միայն սկզբունքային մասը, այլ նաև Աստծո նույնացումն ուներ: Հասկանում եք, նա պարտքը կատարելու ընթացքի մեջ էր, ճիշտ այն, ինչ խոստացված էր այդ ժամանակաշրջանի համար. ոչ թե Նոյի ժամանակաշրջանի, այլ այդ ժամանակաշրջանի համար: «Ես ձեզ կտանեմ մի երկիր, որտեղ կաթ ու մեղր է բխում»: Նրանք ճանապարհին էին, և Իսրայելը նույնացել էր իր մարգարեի՝ Մովսերի, այդ ժամանակաշրջանի Պատգամի հետ: Աստծո հատկանիշները դրսևորվել էին Մովսերի մեջ: Կրակե Սյունը ուղեկցում էր նրան: Նրա գործողությունների մեջ նաև քավություն կար, ոչ թե խոսքերով, այլ գործողությունով: Ոչ թե այն, ինչ կլինի, այլ այն, ինչ հիմա է:

52 Ուշադրություն դարձրե՛ք, նա պղնձե օձ ուներ, որը բարձրացվեց մարդկանց հիվանդությունների և տկարությունների համար, ուստի Մովսերը կիրառում էր աստվածային բժշկությունը: Նա քավություն ուներ՝

պղնձե օձը, որը խորհրդանշում էր, որ Աստված գտնվում էր ճամբարում, և մարդիկ նայելով այդ պղնձե օձին, բշկվում էին:

⁵³ Նա նաև ուներ զարկված Ժայռ, որը ուղեկցում էր նրան: Եվ դա նույնացնելն էր տալիս Աստծուն, որ պահեն Կյանքի Ձրերը, ուրախությունն ու փրկությունը նրանց մեջ, որպեսզի նրանք չկորսվեն, այլ հավիտենական կյանք ունենան: Դա խորհրդապատկերն էր...Անապատում զարկված այդ Ժայռը Քրիստոսի զարկված խորհրդապատկերն էր:

⁵⁴ Այն ժամանակ նրանք շարժվում էին խոստումին համապատասխան: Դա մեկ այլ նույնացում էր, որը ցույց էր տալիս Աստծո բնութագիրը: Կարևոր չէ, թե այս մյուսն որքան ֆունդամենտալ էր Խոսքի հետ. նա ուներ հիմնավորություն գումարաց նույնացումը և Աստծո բնութագիրը նրանց մեջ: Աստված դրսևորում էր Իրեն: Երկու մարգարեներ, նրանք երկուսն էլ մարգարեներ էին, և երկուսն էլ ֆունդամենտալ, բայց Աստված դրսևորեց Իր հատկանիշները Մովսեսի մեջ, որովհետև ինքն Աստծո հատկանիշներն ուներ իր մեջ:

⁵⁵ Հիմա, նորից, Աստծո հատկանիշները միշտ գերբնական են, որովհետև Նա գերբնական է, Աստված գերբնական է: Դա միշտ անսովոր է մեր օրերի ժամանակակից մտածելակերպի համար: Դուք դա գիտեք: Աստված միշտ խափանել է կրոնական խմբերի ճրագրերը յուրաքանչյուր անցած ժամանակաշրջանում:

⁵⁶ Եվ ամեն անգամ երբ մի մարդ կամ մարդկանց մի խումբ, որ երբևէ կազմակերպվել է պատգամի հիման վրա, մեռել է և ուղարկվել են դարակը և էլ երբեք չեն բարձրացել: Պատմություն չկա: Լուրթերականները, երիցականները, մեթոդականները, մկրտականները, հոգեգալստականները և այլն, էլ երբեք չեն բարձրացել, երբ նրանք խմբավորում են Դա:

Աստված գործ ունի անհատների հետ:

⁵⁷ Ուշադրություն դարձրե՛ք, Նա այնքան անսովոր է մտորելու համար: Հասկանում եք, մենք սկսում ենք մեր շարժումը ինչ-որ մի ուղղությունով և մենք պետք է Դրան *այսպես* հավատանք: Իսկ հետո Աստված գալիս է Իր խոստացված Խոսքով և ցույց է տալիս Իրեն այդ Խոսքի մեջ: Այս խումբը չի կարող Դրան մոտենալ, որովհետև չի

հավատում Դրան: Տեսնում եք, նա ինքն իրեն կտրել է Դրանից:

⁵⁸ Հովսեփի նման, նա Դավթի որդի էր, և բարի մարդ էր Հովսեփը՝ Մարիամի նշանածը: Նա բարի մարդ էր, և կասկած չկա, որ անընդհատ կարդում էր Սուրբ Գիրքը՝ մագաղաթները, որովհետև...և սպասում էր Մեսիայի գալստյանը, և պետք է իմանար, որ Սուրբ Գիրքն ասել էր, որ դա կատարվելու է: Ես այն ասել էր. «Կույսը կհղիանա»:

⁵⁹ Հիմա, նա հանդիպում էր այդ երիտասարդ, հավանաբար, տասնութ տարեկան աղջկա՝ Մարիամի հետ, և, հավանաբար, նա իրենից մի փոքի մեծ էր: Իսկ հետո երբ նրանք նշանվեցին որ ամուսնանան, պարզվեց, որ նա մայր է դառնալու: Դա հիմա մի տեսակ դժվար էր Հովսեփի համար որոշում կայացնել: Կասկած չկա, որ Մարիամը պատմել էր նրան Գաբրիելի այցելության մասին: Բայց մենք տեսնում ենք, որ նրա կերպարն առաջնորդում էր իրեն, նա կասկածում էր դրանում:

⁶⁰ Պարզվել էր, որ նա մայր է դառնալու, նախքան նրանց ամուսնությունը: Իսկ Աստվածաշնչում դա պատժվում էր մահով՝ քարկոծությանը: Չամուսնացած մայր դարձաց կինը պետք է քարկոծվեր: Իսրայելում պոռնկություն չկար: Դա անթույլատրելի էր: Ուստի մենք դա գտնում ենք Երկրորդ Օրինացում, մեզ ասվում է դրա մասին:

⁶¹ Մենք հիմա տեսնում ենք, որ Մարիամը, թվում է, թե փորձում էր օգտագործել Հովսեփին իր արարքը ծածկելու համար: Որովհետև եթե նա արդեն մայրացել էր, նախքան նրանց ամուսնությունը, ուրեմն պետք է քարկոծվեր, և հիմա նրան պետք էր մեկը, ով կկարողանար որպես վահան կանգնել նրա համար: Եվ դա կարծես, թե հենց այն էր, ինչ ինքը փորձում էր անել:

⁶² Բայց Հովսեփը նայեց նրա խոշոր գեղեցիկ աչքերի մեջ, և նա ասաց. «Հովսեփ, Գաբրիելը ինձ ասաց՝ «Սուրբ Հոգին քեզ հովանի կլինի, և քո մեջ, քո մեջ ծնունդ առածն Աստծո Հոգուց կլինի: Դա Աստված է: Նա է, որ կոչվելու է «Աստծո Որդի»: Եվ Հովսեփը՝ նա, նա, նա ուզում էր դրան հավատալ, բայց կատարվածն այնքան արտասովոր էր: Դա նախկինում երբեք չէր եղել:

⁶³ Այդպես է նաև այսօր: Եթե միայն կարողանայինք... Եթե ես մի ձև ունենայի մարդկանց հասկացնելու, որ որևէ բանի արտասովորությունը, եթե այն բացահայտվում է

Խոսքով, ապա դրա հատկանիշները ապացուցում են, թե ինչ է դա: Դա Աստված է գործողության մեջ:

64 Հովսեփինը պետք է դա իմանար: Նա պետք է իմանար, որ «Կույսը կհղիանա»: Բայց նա անկեղծ էր այդ հարցում: Նա չէր ուզում ծածուկ թողնել նրան, սակայն նա, նա մտածում էր այդ բանն անելու մասին:

65 Եվ այդ ժամանակ Տիրոջ հրեշտակը երազում հայտնվեց իրեն: Երբևէ ձեզ հարց տվե՞լ եք, թե ինչու Նա երազում հայտնվեց: Այդ ժամանակ մարգարեներ չկային: Նրա երազն այնքան պարզ էր, որ մեկնությունն կարիք չեղավ: Ասաց. «*Հովսեփ, Դավթի որդի՛, քո կնոջը Մարիամին քեզ մոտ առնելուց մի՛ վախենա, որովհետև նրա մեջ ծնունդ առածը Սուրբ Հոգուց է*»: Տեսնում եք, այդ ժամանակ դա կարգավորեց ամեն բան: Հասկանում եք, Նա եկավ նրա մոտ երազի մեջ, երկրորդական միջոցով: Բայց հասկանում եք, այնտեղ մարգարե չկար՝ մատնանշելու այդ Խոսքը, որ «Մա՛ է այն կույսը, որ պիտի հղիանար»: Հասկանո՞ւմ եք: Ուստի, դրա համար Նա երազում հայտնվեց իրեն, որովհետև վերջինս անկեղծ, արդար և բարի մարդ էր:

66 Եվ ես հավատում եմ, որ Աստված ցանկացած բարի մարդու մոտ կգա մի ձևով և ցույց կտա Իր գործողություններն այդ ժամանակաշրջանի բարի մարդու համար, եթե նա կանչված է Աստծու կողմից այդ ժամանակաշրջանի համար:

67 Հիմա, բայց այդ փաստն այնքան արտասովոր էր, որ նրանք գրեթե չէին կարողանում դա ըմբռնել: Բայց միշտ խոստացված Խոսքի համաձայն հայտնվելը տվյալ ժամանակաշրջանի համար, ահա ողջ այս արտասովորությունը:

Հիմա, կան որոշ մարդիկ, ովքեր շրջում և ասում են. «Դե, սա արտասովոր է, դա Աստված է: Մա արտասովոր է»:

68 Բայց հասկանում եք, այն պետք է ճանաչվեր Խոսքով, իսկ Խոսքն Աստված է: Հասկանո՞ւմ եք: Եվ այն ժամանակ այդ նույնացման բնութագիրը ցույց է տալիս նրա ով լինելը, որովհետև Աստված ասել էր. «Մա կատարվելու է», և կատարվում է: Տեսնում եք: Դրա բնութագիրն Աստծո Խոսքն է, որն նույնացված է կատարվող իրողությունների բնութագրով:

69 Նա ասել էր, որ վերջին օրերում կթափի Իր Սուրբ Հոգին: Նա արեց դա: Դրա հատկանիշները ցույց տվեցին, որ դա Աստված էր, Նրա խոստացված Խոսքը: Հասկանում եք, դա միշտ դրսևորում է իրեն:

70 Հիմա, միշտ, ամեն անգամ շտկում է խոսքը, երբ Խոսքը սխալ է ասվել: Երբևէ ուշադրություն դարձրե՞լ եք: Դա եղավ Նոյի օրերում, որ ուղղեց այդ գիտական դարը, որ Աստված պատրաստվում էր ջրով հեղեղել երկիրը: Դա Մովսեսն էր, տեսնում եք, որ ուղղում էր, երբ նրանք բոլորը հաստատվեցին Եգիպտոսում և այլն, բայց Աստծո Խոսքը պետք է հայտնվեր: Եվ Խոսքի ճշմարտությունն ուղղում է սխալը:

71 Թույլ տվեք ձեզ մի բան հարցնել: Այստեղ մենք կարող ենք մի փոքր խորանալ: Ես մտադիր չեմ վարդապետություն կամ ուսմունք քարոզել, բաց թույլ տվեք ձեզ մի բան հարցնել:

72 Հիսուսը Խոսքն էր: Մենք դա գիտենք: Աստվածաշունչն է այդպես ասում: Հովհաննեսի Ավետարան առաջին գլուխ. «Սկզբում էր Բանը (Խոսքը), և Բանն Աստծո մոտ էր և Բանն Աստված էր: Եվ Բանը մարմին եղավ և մեր մեջ բնակվեց»: Նա դեռ Խոսքն է: Այն ժամանակ, երբ Նա կարողացավ գանազանել նրանց մտքերը, նրանք պետք է իմանային, որ դա Խոսքն էր, որովհետև Աստծո Խոսքն ասել էր, որ Նա հենց դա է անելու: Նա մարգարե էր:

73 Այժմ ուշադրություն դարձրե՛ք, մենք պարզում ենք, որ երբ Նա ծնվեց, մոտ տասներկու տարեկան հասակում, գնաց տապանակի տոնին: Նրանք էլ գնացին այնտեղ Չատիկը նշելու: Հետդարձի ճանապարհին, նրանք երեք օրվա չափ ճանապարհ էին անցել և կորցրել էին Նրան. իմանալով, կարծելով, ավելի ճիշտ՝ ենթադրելով, թե Նա իրենց աղգականների հետ է:

74 Այստեղից մենք կարող ենք դաս քաղել: Դա այսօր այնքան շատ է: Հիմա դուք՝ մեթոդականներ, մկրտականներ, երիցականներ, յուրթերականներ, կաթոլիկներ, ով էլ որ լինեք, հասկանում եք, դուք այդ նույն բանն եք անում: Դուք հասկանում եք, քանի որ Ուեսլեյը մեծ արթնություն ունեցավ, Լյութերը մեծ արթնություն ունեցավ կամ հոգեգալստականները մեծ արթնություն ունեցան, դուք հասանում եք, որ Նա մարդկանց մեջ է, երբ երբեմն Նա այնտեղ չէ:

75 Երանք գնացին Երան փնտրելու: Որտե՞ղ գտան Երան: Որտեղ որ թողել էին, Երուսաղեմում: Եվ երբ գտան Երան, ի՞նչ էր անում: Փոքրիկ տասներկու տարեկան տղան գուցե երբեք դպրոց չէր գնացել, ոչ ավելին, քան այն, ինչ Երա մայրն էր իրեն սովորեցրել, և ահա Եա տաճարում էր, բանավիճում էր այդ քահանաների հետ Աստծո Խոսքի շուրջ: Եվ նրանք զարմանում էին այդ Երեխայի իմաստության վրա: Ինչո՞ւ: Եա Խոսքն էր: Այժմ տեսե՛ք:

76 Հիմա կաթոլիկներին վիրավորելու համար չեմ ասում սա, ովքեր Մարիամին աստվածամայր են անվանում, այլ պարզապես թույլ տվեք ձեզ մի փոքրիկ սխալ ցույց տալ այստեղ: Եթե եկեղեցին կառուցված է Մարիամի վրա, տեսե՛ք, թե ինչ կատարվեց: Եա մոռեցավ և ասաց. «Ո՛հ, հայրդ ու ես արցունքներով Քեզ էինք փնտրում»: Եայե՛ք այդ հայտարարությանը, այդժամ նա խոտանեց իր իսկ վկայությունը: Եա ասաց. «Հայրդ ու ես արցունքներով Քեզ էինք փնտրում»:

77 Հետևե՛ք այդ Խոսքին: Եա Խոսքն էր: Հիսուսն ասաց. «Չգիտե՞ի՛ք, որ Ես Իմ Հոր գործին պետք է լինեմ»: Տեսե՛ք, թե ինչպես է Խոսքն շտկում սխալը: Հենց այնտեղ՝ այդ քահանաների առաջ նա ավիրեց իր վկայությունը: Եա ասում էր, որ հղիացել էր Սուրբ Հոգուց, իսկ այստեղ ասում է, որ Հովսեփն էր Երա «հայրը»: Տեսնո՞ւմ եք, որ Խոսքն անմիջապես դա արագ որսաց: Եա Խոսքն էր: Հիմա, դուք գիտեք, որ տասներկու տարեկան տղան չէր անի այդ: Եա Խոսքն էր: Ինքն այդ ժամանակաշրջանի ասված Խոսքն էր, ուստի, դրա համար Աստծո նույնացած բնութագիրը Քրիստոսի մեջ էր: Եա ուղղում էր սխալները: Ասաց...

Երանք ասացին. «Մենք Մովսեսի աշակերտներն ենք»: Տեսնո՞ւմ եք:

78 Եա ասաց. «Եթե դուք Մովսեսի աշակերտները լինեիք, Ինձ կճանաչեյիք, քանի որ նա իմ մասին է գրել: Մովսեսն ասել էր. «Ձեր Տեր Աստվածը ինձ նման մի Մարգարե կհանի»: «Ինձ կճանաչեյիք, եթե Մովսեսին ճանաչեյիք»:

79 Տեսնում եք, Խոսքը միշտ շտկում է օրվա սխալը: Բայց մարդիկ չեն ուզում դրան հավատալ: Երանք պարզապես նույն ձևով կառչած են մնում դրանից:

80 Սակայն Հիսուսը շտկեց Իր սեփական մորը: Երա մայրը շփոթմունքի մեջ էր, որովհետև նա արդեն ասել

Էր, որ նրանում հղիացած Երեխան Սուրբ Հոգուց էր, իսկ այստեղ փոխում է իր վկայությունը և ասում է, որ Հովսեփին էր Նրա «հայրը», Հիսուսի հայրը: Հիմա եթե, եթե Հովսեփը...

⁸¹ Եթե Նա Հովսեփի որդին լիներ, եթե Նա Իր հոր գործին պետք է լիներ, ուրեմն հյուսնի խանութում կլիներ:

⁸² Բայց Նա Իր Հոր գործին էր, այնտեղ՝ Տաճարում, հանդիմանելով այդ կազմակերպություններին: Տեսնո՞ւմ եք: Նա Իր Հոր գործին էր, ընդամենը տասներկու տարեկան Տղա: «Չգիտեի՞ք, որ Ես Իմ Հոր գործին պետք է լինեմ»:

⁸³ Ուշադրություն դարձրե՞լ եք այն բանին, երբ Հիսուսը փորձվում էր սատանայի կողմից: Նրա բնութագիրն այնտեղ, երբ Նա փորձության մեջ էր, դրսևորեց, որ Նա Աստված է, որովհետև մնաց Խոսքի հետ: Տեսնո՞ւմ եք: «Գրված է...»,— ասաց սատանան:

Հիսուսն ասաց. «Գրված է նաև...», մնաց անմիջապես Խոսքի հետ:

⁸⁴ «Աստված շատ անգամներ,— կարդում ենք այստեղ,— Աստված շատ անգամներ,— առաջուց,— շատ կերպերով, շատ միջոցներով,— հայտնել է Իրեն Իր մարգարեներին տեսիլքների միջոցով»: Դա մարգարեի բնութագիրն էր, որ երբ նա կանխատում էր իրադարձություններ և դրանք կատարվում էին: Հիմա դա նույնացման բնութագիրն էր, որ Աստված նրա հետ էր: Այդ դեպքում դա նրան իրավունք էր տալիս մեկնաբանելու այդ օրվա համար տրված Խոսքը, որովհետև «Աստծո Խոսքը գալիս է մարգարեների մոտ», մարգարեի բնութագիրն է, որը Նա կանխատել է:

⁸⁵ Աստվածաշունչն ասում է. «Եթե լինի մեկը, և այն, ինչ նա ասում է, կատարվում է, ուրեմն լսեք նրան, բայց եթե չի կատարվում, մի՛ հավատացեք նրան, մի՛ վախեցեք նրանից, այլ Իմ...եթե, եթե Իմ Խոսքը նրա մեջ չէ: Բայց եթե կատարվում է, ուրեմն Իմ Խոսքը նրա մեջ է»: Դա է նրա ինքնության հաստատումը: Դա է մարգարեի բնութագիրը:

⁸⁶ Հիմա, Աստված շատ անգամներ, ահա թե ինչպես է Նա ցույց տվել Իր նույնացման հատկանիշները մարդուն՝ խոսելով մի մարդու միջոցով, ով կանչված է եղել մարգարե լինելու: Հիմա, Աստվածաշունչն ասում է, որ

«Աստված շատ անգամներ, շատ կերպերով խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով»:

⁸⁷ Նաև կարդում ենք Պետրոսի երկրորդ թղթում, որ Աստծո ողջ Խոսքը գրվել է նրանց կողմից: «Հին Կտակարանի այրերը Սուրբ Հոգուց շարժված գրել են Աստվածաշունչը»: Նրանք մարգարեներ էին: Խոսքը գալիս էր նրանց մոտ, և նրանք ներշնչանքի ներքո գրում, գրի էին առնում Այն: Նախ նրանք հաստատված մարգարեներ էին, հետո նրանք, նրանք գրում էին ներշնչված Խոսքը, և ունեին աստվածային հայտնության մեկնությունը, որովհետև դա Աստված էր մարդու մեջ:

⁸⁸ Ահա թե ինչպես էր Նա ցույց տալիս Ինքն Իրեն Իր նույնացման հատկանիշներով, նրանց տեսիլքները Աստծո հաստատված բնութագիրն էր նրանց մեջ՝ հայտնելով Իրեն մարդկանց:

⁸⁹ Հիմա, դա միակ միջոցն էր, որով Նա Քրիստոսի մեջ էր: Սարգսրեն ընդամենը մի փոքրիկ մասնիկ էր: Քրիստոսն Աստծո լիությունն էր: Աստված էր Քրիստոսի մեջ, որ աշխարհը հաշտեցրեց Իր հետ: Եվ Նրա հատկանիշները ցույց էին տալիս Նրա Ով լինելը, այն աստիճան, որ ասաց. «Եթե Իմ Հոր գործերը չեմ անում, ուրեմն մի՛ հավատացեք դրան: Եթե Ես Իմ Հոր բնությունը չունեմ, ուրեմն Ինձ մի՛ հավատացեք, մի՛ հավատացեք Իմ հայտարարություններին: Եթե Ես Իմ մեջ չունեմ Իմ Հոր բնությունը, ուրեմն բնավ մի՛ հավատացեք դրան»:

⁹⁰ Հիմա, Նրա հատկանիշները երբեք չեն փոխվում: Աստված Իր բնությունը չի կարող փոխել, նույնպես, ինչպես, ինչպես և գառնուկը չի կարող փոխել իր բնությունը, կամ ցանկացած որևէ այլ բան չի կարող փոխել իր հատկանիշները: Որովհետև քանի դեռ այն իր բնօրինակի մեջ է, դա բնօրինակն է: Եվ եթե դուք ինչ-որ բան փոխում եք, ուրեմն այն փոխել եք իր բնօրինակից:

⁹¹ Դա ճիշտ այնպես է, ինչպես դուք կարող եք խոզին վերցնել, կարող եք լվանալ նրան, և, և ներկել եղունգները, ինչպես կանայք են ներկում, շուրթերը քսել և գեղեցիկ զգեստ հագցնել: Թողեք նրան, նա իսկույն կվերադառնա թավալվելուն և նորից կթավալվի: Ինչո՞ւ: Նա խոզ է, և վերջ: Բայց, և, բայց գիտեք, դուք չեք ստիպի...

⁹² Գառնուկը դա չի անի: Նա նույնիսկ չի մտնի այդ ցեխերի մեջ: Նա դրա հետ չի ուզում որևէ գործ ունենալ: Սա նրա հատկանիշներն են: Հասկանո՞ւմ եք: Կարող եք

նրան նույն տեսակի շոր հագցնել, բայց նա անկասկած չի գնա, նա հաստատ չի գնա: Կարևորը արտաքինը չէ, այլ ներքինը: Հիմա, Աստված լինելով ողջ կյանքի աղբյուրը...

⁹³ Բաց մի՛ թողեք սա. Ես իմ ողջ էությանը փորձում եմ մղել ձեզ, որ մի բան տեսնեք: Հասկանո՞ւմ եք: Դա ձեր օգտի համար է, բարեկամներ: Սա ի օգուտ ձեզ է: Հասկանո՞ւմ եք:

⁹⁴ Ես չեմ եկել այստեղ՝ ինձ ցույց տալու համար: Ես չեմ եկել այստեղ, որովհետև ուրիշ գնալու տեղ չկար: Ես եկել եմ այստեղ, որովհետև զգում էի, որ պետք է գամ այստեղ: Չգում էի, որ այս ծառայությունը, որ Տերը տվել է ինձ, պետք է ցույց տրվի մարդկանց մեջ այստեղ, և ես ջանում եմ մղել ձեզ տեսնելու, թե ինչ է իրականում Աստված հիմա: Ես Իր խոստացված Խոսքն է: Ես միշտ Խոսքն է, և Ես նույնացնում է Իրեն այն բնության միջոցով, որը Ես խոստացել է: Որոշակի անձնավորություն ելնում է որոշակի ժամանակում, որը նշված է Խոսքի մեջ, այնուհետև տվյալ անձնավորության բնութագիրը, որը պետք է վեր հանվեր, ցույց է տալիս, թե ով է այդ անձնավորությունը:

⁹⁵ Այդ է պատճառը, որ Հիսուսը պետք է լիներ այն, ինչ եղել է: Նրանք պետք է դա տեսնեյին: Չարմանալի չէ, որ նրանք կույր էին: Բանն այն... Ասվում է, չնայած Ես այնքան հրաշքներ արեց, բայց և այնպես նրանք չկարողացան հավատալ, որովհետև Ես ային ասել էր. «Աչքեր ունեն, և չեն կարողանում տեսնել, ականջներ ունեն, և չեն կարողանում լսել»: Հասկանո՞ւմ եք: Ամեն ժամանակաշրջան ոչ միայն Նրա ժամանակաշրջանը. այլ ամեն ժամանակաշրջան, ինչպես «Աստված շատ անգամներ, շատ կերպերով», մինչդեռ նրանք ուղղակի չէին կարողանում դա հասկանալ:

⁹⁶ Հիմա, Նրա հատկանիշները երբեք չեն ձախողվում: Դրանք միշտ նույնն են: Հիմա, հիշե՛ք, Նրա բնութագիրը, Աստծո բնութագիրը չի կարող ձախողվել: Եթե դա այդպես լինի, ուրեմն Աստված ձախողվել է: Իսկ Աստվածաշունչն ասում է Եբր. 13.8 համարում, որ «Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան»: Հետևաբար, Ես անփոփոխ Աստված է: Ինչ բնությունն որ Ես ունեցել է սկզբում, դեռ այդ նույն բնությունն է: Այն, թե ինչպես է Ես գործել բոլոր ժամանակներում, ինչ որ Ես արել է, միշտ արել է նույն կերպ: Եթե Ես այդպես չի անում, ուրեմն Նրա բնությունը փոխվել է,

հասկանում եք, և Նրա հասկանիչները ցույց կտան մի բան, որը Աստծուց չէ: Հասկանո՞ւմ եք: Այսպիսով մենք չենք իմանա, թե որտեղից...

97 Ինչպես Պողոսն է ասում. «Եթե փողը անորոշ ձայն հանի, ո՞վ կիմանա, որ պետք է պատրաստվի պատերազմի, եթե փողը անորոշ ձայն հանի»: Հիմա եթե ենթադրվում է, որ փողը հնչեցնելու է «նահանջելու» հրամանը, ուրեմն հենց այդ էլ մենք պետք է անենք, նահանջենք: Եթե փողը հնչեցնում է «հարձակվելու» հրամանը, հենց այդ էլ պետք է անենք, հարձակվենք: Բայց ի՞նչ է Փովր: Դա Աստծո Խոսքն է: Դա ցույց է տալիս Աստծուն, լինի դա, լինի դա «կանգնելու, նստելու, նահանջելու, զենքերը վայր դնելու» հրաման, ինչ էլ որ լինի: Դա Աստծո Փողի ձայնն է:

98 Եվ անորոշ ձայնը, երբ Աստվածաշունչն ասում է, որ որոշակի մի բան է կատարվելու, ինչ-որ մեկն ասում է. «Ո՛հ, դա ուրիշ ժամանակներից էր»: Այդ դեպքում այնտեղ անորոշ ձայն է հնչում: Այդժամ դուք չգիտեք, թե ինչ անեք:

99 Հիսուսն ասաց. «Ես իշխանություն ունեմ կյանքս դնելու և իշխանություն ունեմ դարձյալ նրան հարություն տալու»: Այնտեղ ոչ մի անորոշ ձայն չկա:

100 Կինն ասաց. «Մենք գիտենք, որ Մեսիան պիտի գա. և երբ Նա գա, մեզ կպատմի այս բաները, ինչպես որ հաղորդել էր»:

101 Նա ասաց. «Ես Նա եմ»: Այնտեղ ոչ մի անորոշ ձայն չկար: «Ես Նա եմ»: Ըհր: Ամեն:

Նրանք ասացին. «Մեր հայրերը անապատում մանանա կերան»:

102 Նա ասաց. «Եվ նրանք բոլորն էլ մեռան»: Հետո ավելացրեց. «Բայց Ես եմ Կյանքի Հացը, որն իջնում է երկնից, Աստծո մոտից»: Ոչ մի անորոշ ձայն: «Ես եմ Կենաց Ծառը, որը Եդեմի պարտեզում էր»: Ոչ, ոչ մի անորոշ ձայն դրա վերաբերյալ: Իհարկե՝ ոչ: Այդ հարցում ոչ մի անորոշություն: Նրա արած ամեն բանում Նա հստակ էր:

103 Աստվածաշունչն անորոշ ոչ մի ձայն չի հնչեցնում: Այն ցույց է տալիս Աստծո բնութագիրն այդ հնչողության մեջ:

104 Հիսուսն ասաց Հովհ.10.37 համարում. «Եթե Իմ Հոր գործերը չեմ կատարում, ինչ...և Իմ Հոր բնությունը չունեմ, ուրեմն Ինձ մի՛ հավատացեք: Նրանք մեկ են,

դրանք դրսևորում են Նրա բնությունը Ինձանում, Նրա հատկանիշները»:

¹⁰⁵ Որովհետև Հայրն է Խոսքը. «Սկզբում էր Բանը, և Բանն Աստծո մոտ էր, և Բանն Աստված էր», և Աստծո բնութագիրը դրսևորված է այդ ժամանակաշրջանի համար տրված Իր խոստումի միջոցով:

¹⁰⁶ Հիմա եթե Նա ապրեր Մովսեսի ժամանակ, դա չէր աշխատի: Եվ եթե Մովսեսն ապրեր Նրա ժամանակ, դա չէր աշխատի: Եթե Նա ապրեր Նոյի ժամանակ, դա նույնպես չէր աշխատի, կամ եթե Նոյն ապրեր Նրա ժամանակ: Նոյը մարգարեանում էր այդ օրվա իրադարձությունների մասին, և նրա բնութագիրն ու նրա արածը նույնացրեց նրան Աստծո Խոսքի հետ: Մովսեսը նույն բանն արեց:

¹⁰⁷ Եվ ահա Հիսուսը եկավ, և այդ ժամանակաշրջանի համար խոստացված Խոսքը նույնացավ Հիսուս Քրիստոսի մեջ Խոսքի հատկանիշով, որն Աստված է: Ամեն:

¹⁰⁸ Մուրբ Հոգու հեղումը վերջին օրերում հասարակ մարդկանց վրա նույնացրեց Աստծո բնութագիրը մարդկանց հետ: Նա խոստացել էր դա: Սա Խոսքն է: Նա ասել էր, որ կանի այդ: Ոչ ոք չի կարող դա չեղարկել: Նա ասել էր, որ կանի այդ:

¹⁰⁹ Այսպիսով, այն բոլոր բաները, որոնք Նա խոստացել է, հենց դա էլ անում է: Դա ցույց է տալիս Նրա բնութագիրը: Այո՛, պարոն: «Մի՛ հավատացեք դրան, մի՛ հավատացեք Իմ պնդումներին եթե Իմ բնութագիրն այն չէ, ինչ Աստվածանից է»:

¹¹⁰ Այժմ ուշադրություն դարձրե՛ք Հովհ.14.12 համարին. «Ինձ հավատացողը,— ասաց Նա,— Իմ նույնացումը, Իմ բնութագրությունն ունի: Ինձ հավատացողը այն գործերը, որ Ես գործում եմ, նա էլ կգործի»: Դա ցույց է տալիս, որ Քրիստոսի բնությունը նրա մեջ է՝ դրսևորելով Նրա հատկանիշները: Ամեն:

¹¹¹ Ես հիմա կրոնական մեծ ոգեշնչում եմ զգում, թեև ձայնս խոստել է: Այո՛, պարոն: Ո՛հ, Աստված իմ: Տեսնում եք, Այդ հարցում ոչ մի սխալ չկա: Նրա Կյանքը: «Ինձ հավատացողը այն գործերը, որ Ես գործում եմ, նա էլ կգործի»: Տեսնում եք, դա ցույց է տալիս բնութագիրը:

¹¹² Նույն բանը Նա ասաց. «Եթե Իմ բնությունը չի նույնացնում Ինձ», Աստված Նրա մեջ է, ապա Նա...

մի՛ հավատացեք Նրան: Հիմա, Նա նաև ասաց, որ Ինքը կնույնացվի դրա մեջ: Հետևաբար, դա, եթե դա չի դրսևորում Իրեն, որեմն Նա այն չէ, ինչ ասում է:

113 Եվ այսօր եթե Քրիստոսը չի դրսևորում Իրեն, Քրիստոսի բնութագիրը մեզ բնորոշում է որպես Քրիստոսից լինողներ՝ հավատալով Խոսքին... Հիուսը Խոսքն էր, ուստի Նա պետք է հավատար Խոսքին: Ինչպե՞ս մենք կարող ենք ասել, որ Քրիստոսից ենք, և մերժել այս Սուրբ Գրքի որևէ Խոսքը: Քրիստոսի Սուրբ Հոգին, դա Աստված է ձեզանում, և Նա յուրաքանչյուր խոստումը հաստատելու է «ամեն»-ով: Աստվածաշունչն ասում է. «*Այս նշանները կուղեկցեն նրանց, ովքեր հավատում են*»: Աստծո Հոգին ասել է «ամեն»: Տեսնո՞ւմ եք:

114 Նրանցից ոչ մեկը չի ասում. «Ո՛չ, դա ուրիշ ժամանակաշրջանի համար էր. դա միայն աշակերտների համար էր»:

115 «*Գնացե՛ք աշխարհով մեկ և քարոզեցե՛ք Ավետարանը բոլոր ստեղծվածներին*: Ով որ հավատա, ամենուրեք՝ ամբողջ աշխարհում, այս նշանները կուղեկցեն նրան, նույն բանն է»: «Նույնն է երեկ, այսօր և հավիտյան», հատկանիշը բացահատված է:

116 Դա՛ Եբր. 1.1. «Աստված շատ անգամներ խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով», դրսևորում է Քրիստոսին, հարություն առած այսօր նույն այդ հատկանիշի միջոցով, որ Նա արել է շատ անգամներ: Ուշադրություն դարձրե՞լ եք: Աստված իր ճանապարհները երբեք չի փոխում:

117 Հին Կտակարանում, երբ երազ տեսնողը երազ էր տեսնում, և այդ երկրում մարգարե չէր լինում, որ տեսներ, թե արդյոք այդ երազը ճիշտ էր, թե ոչ, նրանք դա պարզելու մեկ այլ միջոց ունեյին: Նրանք վերցնում էին այդ մարդուն, ով էլ որ լիներ երազատեսը, և տանում էին տաճար: Մհարոնի լանջապանակը, ով քահանայապետ էր, կախված էր սյունից: Եվ տվյալ երազատեսը պատմում էր երազը: Կարևոր չէ, թե որքան լավ, թե որքան իրական էր դա հնչում. եթե այդ քարերի վրա, որոնք կոչվում էին Ուրիմ և Թուրիմ, գերբնական Լույս չէր փայլում (Սուրբ Գիրքն ընթերցողները հասկանում են), ուրեմն, ինձ չի հետաքրքրում, թե որքան իրական էր դա հնչում, դա այդպես չէր: Աստծո արտասովորությունը, Աստծո

բնավորությունը պետք է դրսևորեր Նրա հատկանիշները գերբնականի մեջ՝ ցույց տալու համար, որ Նա Իրեն հայտնեց տվյալ ուղերձի մեջ: Ամեն:

118 Ես այս երեկո նույն բանն եմ ասում: Հին Ուրիմն ու Թումիմը չկան, բայց Խոսքը մնում է այն բանը, ինչ բացահայտում է Աստծո բնութագիրը, ժամի խոստումը, որում մենք ապրում ենք: Կան Աստծո հատկանիշներ, որոնք ճանաչվում են խոստման միջոցով այն ժամի, որում մենք ապրում ենք:

119 Դա դարձնում է Աստծուն նույնը, ինչպիսին եղել է: «Նա շատ անգամներ,— նայե՛ք,— շատ կերպերով խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով»: «Եվ օրենքն ու մարգարեները մինչև Հովհաննեսն էին, այդ ժամանակից ի վեր երկնքի թագավորությունն է»: Ուշադրություն դարձրե՛ք. «Բայց այս վերջին օրերում,— ասում է նույն բանը, ինչ Նա ասել է այն ժամանակ,— Իր Որդու միջոցով»: «Աստված շատ անգամներ, շատ կերպերով խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով, այս վերջին օրերում, — անելով նույն բանը,— խոսում է մարդկանց (հայրերի) հետ Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով»: Նրան մեռելներից հարուցանեց, և Նա ապրում է մեր մեջ՝ դրսևորելով Իրեն և կանխասելով մեզ բաներ, որովհետև Նա սրտի մաքերն ու խորհուրդները քննող է: Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան: «Աստված շատ անգամներ, շատ կերպերով խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով, բայց այս վերջին օրերում խոսեց Հիսուս Քրիստոսի՝ Իր Որդու միջոցով»: Մուրբ Գիրքը հնարավոր չէ խախտել: Այն ճշգրիտ է:

120 Ինչպես արդեն ասացի, Աստված կարիք չունի, որ ինչ-որ մեկը մեկնի այս Խոսքը: Նա է մեկնում Իր սեփական Խոսքը: Երբ Նա ինչ-որ բան է ասում, դա կատարվում է, դա է մեկնությունը: Հասկանո՞ւմ եք: Նա կարիք չունի, որ ինչ-որ մեկն ասի: «Դե, ես կարծում եմ, որ դա *սա է* նշանակում» Աստված դա հաստատում է Իր սեփական մեկնաբանությամբ:

121 Եթե խոստումն այդ օրվա համար է, մենք չենք կարող ապրել Լյութերի լույսի մեջ, մենք չենք կարող ապրել Ուեյլեյի լույսի մեջ, մենք չենք կարող ապրել նրանցից ցանկացածի լույսի մեջ: Մենք պետք է ապրենք այն Լույսի մեջ, որը խոստացված է այս օրվա համար:

122 Ի՞նչ կլիներ, եթե Մովսեսը գնար Եգիպտոս և ասեր. «Դե, մենք մի մեծ տապան կկառուցենք: Մենք լողալով

դուրս կգանք այս երկրից: Նեղոսի ջրերը բարձրանալու են»: Նրանք կնայեին մագաղաթների մեջ. այնտեղ նման խոստում չկա: Դա ճիշտ է: Բայց հասկանում եք, նա իրեն դրսևորեց որպես Աստծո մարգարե, որովհետև այն, ինչ նա ասում էր, կատարվում էր, այդժամ նրանք իմացան, որ ինքը Տիրոջ Խոսքն ուներ: Փարավունն ուներ նիզակներ, բայց Մովսեսը Խոսքն ուներ: Դրա համար երբ նրանք հասան ծովի մոտ, ողջ նիզակները գնացին ջրի տակ, իսկ Մովսեսը իսրայելացիներին ծովի միջով ցամաքով անցկացրեց, որովհետև ուներ Խոսքը, իսկ այդ ժամվա Խոսքը նա էր: Մովսեսն էր այդ ժամվա համար հայտնված Խոսքը:

Եղիան էր այդ ժամվա համար հայտնված Խոսքը:

¹²³ Քրիստոսն է հայտնված Խոսքը, և խոստումները, որոնք Նա տվել էր: «Մի փոքր ժամանակ էլ, և աշխարհն այլևս Ինձ չի տեսնի, բայց դուք Ինձ կտեսնեք, որովհետրև ձեզ հետ կլինեմ, ձեր մեջ մինչև աշխարհի վերջը: Այն գործերը, որ Ես անում եմ, դուք էլ կանեք»: Նա խոստացել է այս բաները: Ի՞նչ է սա: Սա Աստծո բնութագիրն է, որը դրսևորում է Նրա Խոսքը, ինչպես որ արել է բոլոր ժամանակաշրջաններում:

¹²⁴ Մադար. 4-րդ գլխում Նա ասաց. «Միա Եղիա մարգարեին կուղարկեմ ձեզ մոտ, նախքան Տիրոջ մեծ ու ահեղ օրվա գալը. և նա կրկին վերականգնեցնելու է երեխաների հավատը դեպի իրենց հայրերը, նախքան այդ օրվա գալը»: Նա խոստացել է դա:

¹²⁵ Հիսուսն ասաց Ղուկասի Ավետարանի 17-րդ գլխում. «Ինչպես Սողոմի օրերում էր, այնպես էլ Մարդու Որդու գալստյան ժամանակ կլինի, երբ Մարդու Որդին կհայտնվի»: Երբ հայտնությունն ինքնին բացվի այն օրերին, երբ աշխարհը նման կլինի Սողոմին, դա ի՞նչ կլինի: Այդ կատարված Գրվածքի բնութագիրը կլինի: Աստված Իրեն հայտնում է Իր բնութագրի միջոցով, հատկանիշներ, որոնք Նա միշտ ունեցել է: Նա չի կարող դա լքել:

¹²⁶ Այս վերջին օրերում Նա հայտնվեց Իր Որդու միջոցով: Ուշադրություն դարձրե՛ք, թե Աստված ինչպես է միշտ անում այս...ինչպես Նա միշտ...Նա Իր գործելակերպը երբեք չի փոխում:

¹²⁷ Այս երեք տղամարդիկ, ովքեր գրուցում էին Աբրահամի հետ Սողոմի օրերում, ինչպես քիչ առաջ

ասում էինք:

¹²⁸ Աբրահամը մի մարդ էր, ով հավատաց Աստծուն: Նա կառչեց Աստծո խոստումից: Սառան՝ նրա կինը վաթսուներեք տարեկան, իսկ Աբրահամը յոթանասուն հինգ տարեկան էր, երբ Աստված կանչեց նրան: Նա ասել էր, որ նրանք երեխա կունենան. Աբրահամը Սառայից է երեխա ունենալու: Սա կարող է մի փոքր ծիծաղելի թվալ, բայց ես պատկերացնում եմ, որ նա բոլոր այդ փոքրիկ կոշիկները և քորոցները և նման բաները պատրաստել էր, որովհետև նրանք ունենալու էին այդ երեխային:

¹²⁹ Առաջին քսանութ օրից հետո Աբրահամը գուցե ասաց Սառային. «Ինչպե՞ս ես քեզ զգում, սիրելի՛ս»:

— Ոչ մի տարբերություն:

— Փառք Աստծուն, մենք ամեն դեպքում նրան կունենանք:

— Որտեղի՞ց գիտես:

— Աստված է այդպես ասել:

Մեկ տարի անցավ: «Ինչպե՞ս ես քեզ զգում, սիրելի՛ս»:

— Ոչ մի տարբերություն:

— Մենք ամեն դեպքում նրան կունենանք: Աստված է այդպես ասել:

Հինգ տարի անցավ: «Ինչպե՞ս ես քեզ զգում, սիրելի՛ս»:

— Ոչ մի տարբերություն:

— Մենք ամեն դեպքում նրան կունենանք: Աստված է այդպես ասել:

¹³⁰ Ի՞նչ էր դա: Նա ուներ Աստծո խոստումը: Նա հավատած Աստծուն և վարվեց Աստծո պես. կառչած էր խոստացված Խոսքից: Դա...

¹³¹ Քսանհինգ տարի անցավ: Փոքրիկ կոշիկներն արդեն դեղնել էին, բայց նա շարունակում էր պահել դրանք: Հիմա նա ծերունի է և ուները կորացել են, և ինքն ահավոր վիճակում է, Սառայի արգանդն էլ մեռած է, նա էլ ամուլ էր: Ի՞նչ վիճակում են նրանք:

¹³² «Ինչպե՞ս ես քեզ զգում, Աբրահամ՝ ազգերի հայր», նրա ձևական հավատացյալ ընկերները ասում էին նրան:

¹³³ «Փառք Աստծուն, ես ինձ հիամայի եմ զգում: Ամեն դեպքում մենք ունենալու ենք այդ երեխային»: Որովհետև նա Աստծո խոստման հանդեպ անհավատությամբ

չերկմտեց, այլ զորացավ՝ փառք տալով Աստծուն, որովհետև լիովին համոզված էր, որ այն, ինչ Աստված ասաց, կարող է կատարել: Ամեն: Սա է հավատացյալի բնորոշ հատկանիշը:

134 Ի՞նչ կասեք ձեր մասին: Հասկանո՞ւմ եք: Ի՞նչ կասենք մենք՝ Աբրահամի որդիներ: Արդյո՞ք մենք նույնացած ենք Աստծո Խոսքի հետ, որպես խոստմունք, և մեր բնութագիրը մեզ ներկայացնում է, որ մենք իրականում հավատում ենք Դրան: Թե մենք ուղղակի տատանվում ենք, *այստեղից* թոնում ենք *այնտեղ*, և *այստեղ*, և ենթադրում ենք, և տատանվում ենք Դրա վերաբերյալ: Այդ դեպքում մենք քրիստոնայներ չենք, այլ ուղղակի ձևական հավատացյալներ ենք:

135 Բայց երբ մենք իսկապես կանգնում ենք այդ խոստման վրա, անմիջապես կառչեք նրանից և մնացեք Դրա հետ: Աբրահամը կառչեց:

136 Մենք հիմա պարզում ենք, որ մի օր նա տեսավ, որ երեք մարդիկ են գալիս նրա մոտ: Աստվածաշունչն այստեղ ասում է. «Դա օրվա տաք ժամին էր», հավանաբար կեսօրին մոտ էր: Այս մարդիկ մոտենում և զրուցում են նրա հետ: Մենք հասկանում ենք, որ նրանցից երկուսն իջան Սոդոմ: Կարծեմ անցած գիշեր մենք խոսեցինք դրա մասին: Նրանցից մեկը մնաց նրա հետ:

137 Նայե՛ք այս Մարդուն, որին նա անվանեց...ով մնաց նրա հետ, թե ինչ արեց Նա: Մեկն Իր հատկանիշով բացահայտվեց, որ Էլոհիմն էր:

138 Էլոհիմը, առաջին բառն է Աստվածաշնչում. «Սկզբում Աստված...»: Հիմա, ձեզանից՝ գիտնականներից ցանկացածը գիտի, որ *Աստված* բառը Եբրայերենում «Էլոհիմ» է, որը նշանակում է «Ամենակարող, ամենաբավ, Ինքն Իրենով գոյություն ունեցող», ոչ մեկի օգնության, ոչ մեկի մեկնության կարիքը չունի. անում է Իր Մեփականը: Նա ամենաբավ, ամենագո, ամենագետ, ամենագոր Աստված է: Նա Աստված է:

139 Նա այնտեղ էր: Եվ հիմա Աբրահամը՝ այս նախահայրը, ով կառչած էր Խոսքից, նայում էր այս Մարդուն: Եվ երբ այս մարդը մեջքով նստած դեպի վրանը՝ ասաց. «Որտե՞ղ է քո կինը՝ Սառան»:

Ասաց. «Նա վրանում է, Քո հետևում»:

140 Ասաց. «Ես եկող տարի դարձյալ քեզ կայցելեմ, և դու կունենաս այն երեխան, որը Ես քեզ խոստացել եմ»:

141 Սառան ծիծաղեց դրա վերաբերյալ: Եվ Նա, Ով գրուցում էր Աբրահամի հետ, ասաց նրան այն, ինչ Սառան ասաց վրանում՝ Նրա հետևում:

142 Հիմա, Ծննդոց գրքում կկարդաք դա: Մենք պարզում ենք, որ այն ժամանակ Աբրահամը, այն բանից հետո, երբ այդ Սարդը հայտնեց Իրեն...

143 Ի՞նչ էր դա: Եբր. 4-րդ գլխի 12-րդ համարն ասում է. «Աստծո Խոսքն ավելի կտրուկ, ավելի գորավոր է, քան երկսայրի սուրը, սրտի մաքերն ու խորհուրդները քննող է»:

144 Աբրահամը գիտեր, թե Ով էր այդ Սարդը: Գիտեր նաև, որ այդ երկրում նրանից բացի մարգարեներ չկային, և դրա համար Տիրոջ Խոսքը նրա մոտ էր եկել: Եվ նա մարգարե էր, և ահա Խոսքը երել էր մարգարեի մոտ:

145 Նույն բանը կատարվեց Հովհաննես Մկրտչի հետ: Չորս հարյուր տարի մարգարե չէր եղել: Ես հիշում եմ...

146 Գուցե դոկտոր Դեյվիսը՝ տարեց միսիոներական-մկրտչական քարոզիչը, ով մկրտել է ինձ հավատքի մեջ, այս երեկո նստած է այստեղ: Նա սովորություն ուներ ինձ հետ վիճելու: Նա ասաց. «Բիլլի՛, դու հիմա ընդամենը երեխա ես: Դու պետք է ինձ լսես»:

Ես ասացի. «Լավ, եղբայր Դեյվիս, լսում եմ»:

147 Նա ասաց. «Հասկանում ես, Հովհաննեսը մկրտված չէր: Ուստի նա մկրտում էր, բայց ինքը մկրտված չէր. ոչ ոք արժանի չէր նրան մկրտելու»: Դա լավ մկրտական աստվածաբանություն է: «Եվ ահա գալիս է Հիսուսը, և ասում է այդ ժամանակ... Հովհաննեսն ասում է. «Ե՛ս պետք է Քեզնից մկրտվեմ, ինչո՞ւ ես Դու ինձ մոտ եկել»: Եվ Նա ասում է. «Թո՛ւյլ տուր հիմա, որ այսպես լինի»: Նա ասաց. «Հետո երբ Հովհաննեսը «թույլ տվեց» Նրան», — ասաց, — հասկանում ես, այդժամ Հիսուսը մկրտեց Հովհաննեսին: Եվ երբ Նա դուրս եկավ ջրից, այդժամ երկինքը բացվեց և Նա տեսավ Աստծուն աղավնու տեսքով, որ իջնում և գալիս է Նրա վրա, ասաց. «Դա է Իմ սիրելի Որդին, Որի մեջ հաճեցի բնակվել»: Բայց ո՛չ, չվիճելով դոկտոր Դեյվիսի հետ, սակայն նա սխալ էր:

148 Հասկանում եք, Հովհաննեսը մարգարե էր, իսկ Խոսքը միշտ գալիս է մարգարեների մոտ: Արդ եթե Խոսքը մարմին դարձավ, Այն ամեն դեպքում պետք է գար

մարգարեի մոտ, որովհետև նա վկայում էր Խոսրի մասին, և նրա հատկանիշը ցույց տվեց, որ նա դա է: Ահա գալիս է Խոսրը, ի՞նչ կատարվեց հիմա: Հենց որ նա դեմ առ դեմ հանդիպեց Հիսուսին, Հովհաննեսն ասաց. «Ե՛ս պետք է Քեզնից մկրտվեմ, ինչո՞ւ ես Դու ինձ մոտ եկել»:

149 Հիսուսն ասաց. «Թո՛ւյլ տուր հիմա, որ այսպես լինի, որովհետև մեզ վայել (պետք) է ամբողջ արդարությունը կատարել»: Հովհաննեսը լինելով մարգարե. Նա լինելով Խոսրը: Նա Չոհն էր, և Ինքը պատրաստվում էր մտնել Իր երկրային ծառայության մեջ, և Չոհը ներկայացնելուց առաջ պետք է լվացվեր: Եվ Հովհաննեսը մկրտեց Նրան, որովհետև ինքը գիտեր: «Թո՛ւյլ տուր հիմա, որ այսպես լինի, որովհետև մեզ վայել է ամբողջ արդարությունը կատարել»: Չոհը ներկայացնելուց առաջ պետք է լվացվեր, և դրա համար Հովհաննեսը մկրտեց Նրան: Հիսուսնը չմկրտեց Հովհաննեսին, այլ Հովհաննեսը մկրտեց Հիսուսին: «Թո՛ւյլ տուր հիմա, որ այսպես լինի»:

150 Ուշադրություն դարձրե՛ք, ահա այստեղ Աբրահամն էր, և ինքն ուներ Տիրոջ Խոսրը: Տիրոջ Խոսրը եկել էր նրա մոտ: Նա մարգարե էր: Եվ ահա գալիս է Խոսրը: Նա նրան «Աբրահամ», ոչ թե *Աբրամ* կոչեց:

151 Մի քանի օր դրանից առաջ նրա անունը Աբրամ էր, Աբրամ, իսկ հիմա Աբրահամ: Նրա կինը Սարա էր, հիմա «Սառա», ոչ թե Ս-ա-ր-ա, այլ Ս-ա-ռ-ա: Ոչ թե (Ա-ր-ր-ա-հ-ա-մ) Ա-ր-ր-ա-մ, այլ Ա-ր-ր-ա-հ-ա-մ, Աբրահամ:

152 Եվ այս Սարդը հայտնեց Իրեն, երբ նրան ասաց. «Աբրահա՛մ»: Ո՛հ, Աստված իմ:

Աբրահամն ասաց. «Էլոհի՛մ»:

153 Այնտեղ գտնվում է Խոսրը և մարգարեն միասին, երկու անձնավորություններն էլ նույնացած են:

154 Էլոհիմը՝ Նա ասաց. «Ո՞ւր է քո կինը՝ Սառան»:

155 Ասաց. «Նա վրանում է, Քո հետևում»: Եվ...Հետո հրաշքն արվեց: Էլոհի՛մ: Աբրահամը Նրան «ամենաբավ, ամենակարող, ամենազոր Աստված» կոչեց:

156 Հիսուսը երկրի վրա եղած ժամանակ ասաց, որ Նա անում է նույն բաները, ինչ Էլոհիմն էր անում: Դա բնորոշեց Նրա հատկանիշը որպես Աստված:

157 Եվ Նա նախօրոք հաղորդել էր. «Վերջին օրերում, անմիջապես Մարդու Որդու գալուստից առաջ, երբ Նա

կհայտնվի, կրկին կլինի այնպիսի իրավիճակ, ինչպես Սողոմոնում էր»: Էլոհիմ՝ ամենակարող Աստվածը Իր ժողովրդի մեջ: Հենց այդ է Սուրբ Գրիքն ասում: Էլոհիմն Իր ժողովրդի մեջ:

158 Քառասուն տարի Նա մեզ մկրտել է Սուրբ Հոգով, Էլոհիմը՝ Աստված: Եվ եկեղեցին...

159 Տես՛ք, Աբրահամը մի նշան տեսավ, մեկ այլ կանչ. մի նշան, մի կանչ. մի կանչ. մի նշան. սպասելով այդ խոստացված որդուն: Սակայն վերջին նշանը, որ ինքը տեսավ, վերջին հայտնվելը, Աստծո վերջին այցելությունը, նախքան խոստացված որդու ասպարեզ գալը, սա էր՝ Էլոհիմը մարդկային մարմնում: Հետո խոստացված որդին եկավ:

160 Աբրահամի սերունդն էլ է սպասում խոստացված Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Նրանք նույնպես տեսել են նշանները՝ Սուրբ Հոգու հեղումը, լեզուներով խոսելը, աստվածային բժշկությունը և այլն: Բայց երբ Մարդու Որդին հայտնվի, Էլոհիմը վերադառնալու է Աբրահամի թագավորական սերունդի մոտ և ցույց է տալու նույն բանը, ինչը ցույց է տվել այն օրը, ամեն, Էլոհիմ, ինչպես որ դա եղել է: Ինչո՞ւ: Դա լինելու է Աստծո բնութագիրը:

161 Հիմա, եթե Քրիստոսն Աստված էր. «Մի փոքր ժամանակ էլ, և աշխարհն այլևս Ինձ չի տեսնի, բայց դուք կտեսնեք, որովհետև ձեզ հետ կլինեմ, ձեր մեջ մինչև ավարտը՝ վերջը: Այն գործերը, որ Ես անում եմ, դուք էլ կանեք»:

162 Հիսուսը դա ասաց Դուկասի Ավետարանի 17-րդ գլխում: Լավ, երբ մենք հավատում և տեսնում ենք այդ վերջին օրերը, այդ բանաձևը պետք է կրկին արձագանքի:

163 Հետևաբար, Եբր. 1.1 համարում գրված. «Աստված շատ անգամներ հայտնեց Իրեն մարգարեների միջոցով, այս վերջին օրերում հայտնեց Իր Որդու հարությունը մեռելներից», Եկեղեցուն շնորհելով նույն հատկանիշը, որը Նա ուներ, դարձնելով Եբր. 13.8 համարը միանգամայն ճիշտ:

164 Ոչ մի փետուր չի կարող հանվել դրանից: Դրանք արծվի փետուրներ են: Դրանք ամուր են մնում, որովհետև նրանք երկնային թռչուն են: [Զձայնագրված հատված ձայներիցի վրա: Ծան. խմբ.]...նրանք սնում են նրանց արծվի կերակուրով:

165 Այժմ մենք նկատում ենք, որ «Նա շատ անգամներ, շատ կերպերով խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով, այս վերջին օրերում խոսեց Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, Նրան մեռելներից հարություն տալով»: Եվ ահա երկու հազար տարի անց Նա մեր մեջ է, նույն Հիսուսը, ոչ թե մարգարեներից մեկը, Հիսուսը, պելոփիա, հարություն առած Աստծո Որդին:

166 Մի օր Հիսուսն ասաց. «Չար ու շնացող սերունդը նշան է ուզում, և նրանք նշան կատանան»: Չար ու շնացող սերունդ: Ե՞րբ է աշխարհն ավելի չար կամ շնացող և աղավաղված եղել, քան հիմա է:

167 «Ինչպես Հովնանի օրերում էր, ինչպես Հովնանը երեք օր ու գիշեր կետի փորում մնաց, այնպես էլ Մարդու Որդին պիտի մնա երկրի սրտում երեք օր ու գիշեր»:

168 Այդ ժամանակ «չար ու շնացող սերունդը» նշան պետք է ստանար: Ի՞նչ նշան: Հարության նշանը: Եվ այսօր մենք դա ունենք, երկու հազար տարի անց Նա դեռ կենդանի է: Նա այսօր մեր մեջ է նույնը՝ երեկ, այսօր և հավիտյան, նույնացնելով Իրեն Աստծո հատկանիշների միջոցով, դրսևորելով Խոսքն այս օրերում, որը Նա խոստացել էր անել: Ամեն:

169 Խոսքը կա: Հիմա արդյոք կհավատա՞ք այդ նշանին, հետևյալ հարցն է, վերջին օրերում, Նրա նույնացումը Իր Որդու միջոցով: Ուշադրություն դարձրե՛ք:

170 Աստված շատ անգամներ խոսեց Մովսեսի հետ: Երկրորդ Օրինաց. 18.15 համարում ասվում է. «Ձեր Տեր Աստվածը ինձ նման Մարգարե կհանի»: Այժմ նայե՛ք: Դա Խոսքն է: Դա Խոսքն է: Դա Աստված էր: Դա Մովսեսը չէր: Ինչպե՞ս Մովսեսը կիմանար դա: Նա մարդ էր: Սակայն Աստված՝ խոսելով Մովսեսի միջոցով, ասաց սա: Հավատո՞ւմ եք դրան: Ծատ լավ:

171 Այժմ ուշադրություն դարձրե՛ք Հիսուսին, տեսե՛ք, թե ինչպես Նրա, Նրա հատկանիշները ցույց տվեցին այս խոստացված Խոսքի ճշմարտությունը: Նա, անշուշտ, արեց: Նա ճանաչվեց այս բնութագրով, որ Մովսեսը ասել էր:

172 Այսօրվա պես նրանցից շատերն ուզում են մի մեծ առաջնորդ տեսնել: «Ո՛հ, սա փիլիսոփայության դոկտոր *այսինչ, այնինչն է*: Նա Հարվարդի համալսանից է»: Կամ. «Նա դրա նման ինչ-որ մի մեծ տեղից է»: Դա Աստծո

նույնացումը չէ: Ո՛չ, ո՛չ: Ո՛չ, ամենևին: Խոսքը, ահա թե ինչն է նույնականացնում Աստծուն: Հասկանո՞ւմ եք:

¹⁷³ Հիսուսն աշխարհի համար ոչ գիտնական, ոչ քահանա, ոչ էլ ռաբբի էր: Նա ուխտադրուժ էր այս աշխարհի համար:

¹⁷⁴ Բայց Աստված հաստատում էր Իր Խոսքը Նրա միջոցով, որը Նրան դարձրեց Էմմանուել: Դա Նրա նույնացումն էր: Հիմա, այստեղ Հիսուսը ճշգրտորեն բավարարում էր այն, ինչ Աստված շատ անգամներ ասել էր, որ անելու է, Մովսեսի միջոցով, այն, ինչ Նա անելու է:

¹⁷⁵ Հիմա նայե՛ք, երբ Նա հանդիպեց Պետրոսին, ինչպես անցած երեկո մենք դրամատիկորեն ներկայացրեցինք դա, երբ հանդիպեց Պետրոսին և ասաց նրան, թե ինչ էր նրա անունը: Այս նշանով Պետրոսը նույնացրեց Նրան Մեսիայի հետ, որովհետև Խոսքն ասել էր. «Ձեր Տեր Աստվածը մի Սարգարե վեր կհանի»:

¹⁷⁶ Եվ Պետրոսը եկավ, ով այդ ժամանակ Սիմոն էր, եկավ այնտեղ, ուր Նա էր: Եվ Հիսուսը նայեց նրան և ասաց. «Քո անունը Սիմոն է, և դու Հովնանի որդին ես»: Դա ցույց տվեց Քրիստոսի բնությունը, որ Նա էր այն Խոսքը, որ Մովսեսը խոստացել էր: Պետրոսը հասկացավ, որ այդ նշանը բացահայտեց Հիսուսին որպես Մեսիա: «Աստված էր Քրիստոսում», օծությունը վերջին օրերի համար: Նաթանայելին...Հիշո՞ւմ եք՝ Նա Սիմոնին ասաց նրա անունը:

¹⁷⁷ Հիմա, տեսե՛ք, Նաթանայելին ասաց այն, ինչ ինքն արել էր: «Դու ծառի տակ էիր, երբ Ես քեզ տեսա»: Դա հաստատեց Նրան որպես Մեսիա:

¹⁷⁸ Նաթանայելն ասաց. «Դու ես Աստծո Որդին, Դու ես Իսրայելի թագավորը»: Նա ճանաչվեց խոստացած Խոսքի հատկանիշի միջոցով, որ Նա պետք է լիներ Մեսիան: «Ձեր Տեր Աստվածը մի Սարգարե կհանի»:

¹⁷⁹ Ձրհորի մոտ կանգնած խեղճ կնոջը Նա ասաց, թե ով էր ինքը, և դա բացահայտեց Նրան որպես այն խոստացված Մեսիան: Հասկանո՞ւմ եք:

¹⁸⁰ Նրա բնությունը, Նրա հատկանիշները հայտնված Խոսքն էին: Նրա հատկանիշներն էին, որոնք ցույց էին տալիս, որ Խոսքն Աստված էր, ուստի դա Աստված էր հայտնված Քրիստոսի մեջ: Այժմ նայե՛ք սրան: Ուշադրություն դարձրեք:

¹⁸¹ Պետրոսին, Նա Պետրոսին բացահայտվեց իր անունը ասելու միջոցով: Նաթանայելին բացահայտվեց նրա

արածն ասելու միջոցով: Այդ կնոջ կողմից բացահայտվեց նրա ով լինելն ասելու միջոցով: Ի՞նչ էր նա... ով էր նա. ինչ էր նա արել. և ով էր այդ կինը: Նա դրսևորեց Իր մեսիական բնութագիրը, որը պետք է Մեսիայի հատկանիշը լիներ:

¹⁸² Նայե՛ք այդ խեղճ կնոջը, որ նույն բանն ասաց. «Տե՛ր, տեսնում եմ, որ Դու մարգարե ես: Մենք չորս հարյուր տարի մարգարե չենք ունեցել: Մենք ունեցել ենք շատ եկեղեցիներ, շատ իրարանցումներ և հարանվանական տարածայնություններ, բայց չորս հարյուր տարի մարգարե չենք ունեցել: Մենք գիտեք, որ երբ Մեսիան գա, հենց սա է բացահայտելու Իրեն:

¹⁸³ Նա ասաց. «Ես, որ քեզ հետ խոսում եմ, Նա եմ»: Ոչ մի անորոշություն չկար դրա հետ կապված: «Ես Նա եմ»: Դա բացահայտեց Նրան:

¹⁸⁴ Արյունահոսությամբ տառապող կինը ճանաչեց, որ Ինքը Խոսքն էր: Ինչպե՞ս: Նրա արած գործով, երբ նրա հավատը դիպչեց Նրան: Նա շրջվեց և ասաց. «Ո՞վ դիպավ Ինձ»: Նա գիտեր, որ ինչ-որ բան էր կատարվել: Դա բնորոշեց Հիսուսին որպես Մեսիա:

¹⁸⁵ Նա հավատում էր դրան, և ասել էր. «Եթե միայն Նրա հանդերձին դիպչեմ՝ կբժշկվեմ»:

¹⁸⁶ Դրա համար հենց որ նա այդ արեց, Հիսուսը շրջվեց և ասաց. «Ո՞վ հիմա դիպավ Ինձ»: Նրանք բոլորն էլ ուրանում էին դա: Բայց Նրա մեսիական հատկանիշը...

¹⁸⁷ Ամե՛ն: Հուսով եմ՝ դուք դա տեսնում եք, եկեղե՛ցի: Լսե՛ք, քանի որ ավարտում ենք:

¹⁸⁸ Նա այնտեղ դիպավ Նրան: Կային հարյուրավորներ, ովքեր հավանաբար փորձում էին դիպչել Նրան: Պետրոսը նույնիսկ հանդիմանեց Նրան ասելով. «Դե, նրանք բոլորը դիպչում են Քեզ»:

¹⁸⁹ Նա ասաց. «Այո, բայց ինչ-որ մեկն այլ կերպ դիպավ Ինձ»: Դա է այն տարբերությունը, որ հավատը դիպչում է: Տեսնո՞ւմ եք: Ասաց. «Ինչ-որ մեկը դիպավ Ինձ: Դա մի այլ ձևի հպում էր, Ես թույլացա, որովհետև Ինձանից ուժ դուրս եկավ: Չորություն դուրս եկավ Ինձանից»: Հիմա, Նա կանգնած է այնտեղ:

¹⁹⁰ Հիմա, նույնիսկ Նրա սեփական աշակերտն այլ բառերով ասաց. «Դու խոսում, խոսում ես ինչպես մի մեղավոր անձ: Չե՞ որ մարդիկ, բոլորը դիպչում են Քեզ»:

¹⁹¹ Նայե՛ք Նրան, նայե՛ք հիմա Նրա հայտնությանը: Նա շրջվեց և աչքերով փնտրեց նրան: Նա իսկույն առանձնացրեց նրան: Նա այլևս չէր կարող թաքնվել: Նա պատմեց նրան իր վիճակի մասին և ասաց. «Նրա հավատը նրան բժշկեց»:

¹⁹² Մրանով նա իմացավ, որ Եբր. 4.12 համարում. «Խոսքը քննում է սրտի մտքերն ու խորհուրդները»: Նրա հատկանիշը ցույց տվեց, որ Նա «Աստծո խոսքն էր, որ մարմին դարձավ և մեր մեջ բնակվեց»: Ամեն:

¹⁹³ Կարծում եմ, որ նույն բանն այսօր դրսևորում է Նրան՝ հարություն առած Հիսուս Քրիստոսին, որ ապրում է մեր մեջ այս երեկո, որը նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Հիմա, քանի որ Եբր.13.8 համարը ճշմարիտ է, Նրա բնությունը դրսևորելու է Նրան այսօր, ինչպես դա եղավ այն ժամանակ, նույն կերպ:

¹⁹⁴ Նայե՛ք Կղեոպասին և մնացածներին, հարությունից հետո: Հիսուսը ճանաչեցրեց Իրեն հացը կտրելու եղանակով, ճիշտ այնպես, ինչպես դա արել էր խաչելությունից առաջ: Եվ նրանք... Դա ցույց տվեց Նրա բնութագիրը, որովհետև հենց այդպես Նա արեց դա:

¹⁹⁵ Հիմա, եթե Նա այստեղ լիներ այս երեկո, ինչպե՞ս կնմանեցներ Իրեն: Ճիշտ այնպես, ինչպես արեց երեկ, որովհետև Նա նույնն է այսօր, և հավիտյան էլ նույնն է լինելու: Սա է նույնացումը: Եբր. 4-րդ, տասն...14 և 15 համարները. «Նա հիմա...»: Ասում է. «Նա մեր Քահանայապետն է, Ում կարող ենք դիպչել մեր տկարությունների զգացումով»: Նա հիմա մեր Քահանայապետն է: Նրա հարությունից, մահից, թաղումից, հարությունից և համբարձումից հետո, ամեն, Նա դեռ մնում է նույնը երեկ, այսօր և հավիտյան, Քահանայապետ, Ում կարող ենք դիպչել մեր տկարությունների զգացումով: Ամեն: Նա հիմա դա է, այստեղ գտնվող ամեն տղամարդու և կնոջ համար, ով կհավատա դրան: Նա մեր Քահանայապետն է, որը նույնն է երեկ, այսօր և հավիտյան:

¹⁹⁶ Նա ապրում է հավիտյան: Հավատո՞ւմ եք դրան: Նրա հատկանիշները շարունակ ներկայացնում են Նրան նույնը, ինչպիսին եղել է այն ժամանակ, երբ ապրում էր երկրի վրա: Նա դեռ ապրում է այստեղ այս երեկո Մուրբ Հոգու տեսքով: Նա ապրում է հավիտյան: Եվ Նրա հատկանիշներն ուղեկցում են Նրան, ինչպես որ դա միշտ եղել է, եթե Նա դեռ կենդանի է:

197 Ես այս երեկո շնորհակալ եմ, որ «Աստված շատ անգամներ, շատ կերպերով խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով, այս վերջին օրերում խոսեց Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով»:

198 Ո՛հ, ես չգիտեի, որ այդքան երկար էի խոսում: Մոռացել էի դրա մասին: Ներեցե՛ք: Ես ուղղակի...Ես կանգ կառնեմ:

Աղոթենք:

199 Երկնայի՛ն Հայր, հզոր ողորմած Աստված: Տե՛ր, ես, ես...գուցե ես չափազանց շատ եմ խոսում: Խնդրում եմ, ո՛վ Աստված, եթե շատ եմ խոսացել, ների՛ր ինձ: Մակայն, Տե՛ր, ես չեմ կարող ներում խնդրել իմ ասածի համար: Ես ընդամենն ասել եմ այն, ինչ Դու ասել ես Խոսքիդ մեջ այստեղ:

200 Հիմա ընդամենը մեկ կամ երկու խոսք Քեզանից, Տե՛ր, գուցե այստեղ գտնվող ամեն ոք կտեսնի դա այս երեկո: Խեղճ, հիվանդ մարդիկ կթշկվեն, տեսնելով, որ Դու դեռ մեր Հզոր Քահանայապետն ես: Խնդրում եմ, Տե՛ր, որ հաջորդ այս մի քանի րոպեների ընթացքում նորից կենդանացնես այս Պատգամը իրականության մեջ: Այն, ինչ ասացի Խոսքի համաձայն, թող Քո հատկանիշը դրսևորի Քեզ մեր մեջ այս երեկո, որ Դու նույնն ես երեկ, այսօր և հավիտյան, որովհետև մենք դա խնդրում եք Հիսուս Քրիստոսի Անունով: Ամեն:

201 Մի րոպե ապաստք: Մենք, ես, ես մի քիչ ուշացրի, բայց դուք այդքան էլ չեք դիմանա, որ աղոթքի շարք անցկացնենք տասնհինգ, քսան րոպեյով: Եթե համաձայն եք, բարձրացրեք ձեր ձեռքը, ասեք. «Մենք...»: Լավ, շնորհակալություն, շնորհակալ եմ: Ես խոստացել էի ինն անց կես ձեզ բաց թողնել: Հիմա այդ ժամն է. ևս քսան րոպե: Դրա համար եթե ինձ ընդամենը մոտ տաս րոպե տաք, ես կարագացնեմ:

202 Տեսնենք, թե ի՞նչ աղոթքի թերթիկներ են բաժանել նրանք այսօր: [Ինչ-որ մի եղբայր ասում է. «Օ»: Ծան. Խմբ.] Օ՞: Ինչից, որտեղի՞ց մենք սկսեցինք անցած երեկո, մեկի՞ց, մեկի՞ց: [Կարծեմ՝ մեկն էր.]: Այո: Ըհր:

203 Բացի այդ, անցած երեկո մենք պարզապես...Մուրբ Հոգին...Ես այսօր լսում և կրկնում էի այն, ինչ ասվեց: Դրանցից մի քանիսը ֆրանսիական անուններ էին, ես... Մուրբ Հոգին. միակ ձևը, որ ես կարողացա դա անել, պարզապես սպասել ու տեսնելն էր:

204 Հասկանում եք, երբեմն երբ դու տեսիլք ես տեսնում, դա պետք է բացվի և թարգմանվի: Դա մեկնաբանված է: Տեսիլքը, դու, դու կարող է ոչխար տեսնես, ինչը կարող է բուրդ նշանակել: Հասկանում եք, պետք է, պետք է նաև դրա մեկնաբանությունն ունենաս, հասկանում եք, բացել այդ տեսիլքը և թարգմանել այն:

205 Անցած երեկո նկատեցի, որ ես, ես չէի կարողանում արտասանել այդ ֆրանսիական անունները, ստիպված էի դրանք տառ առ տառ արտասանել:

206 Աֆրիկայում և հոտենտոտների ու հեթանոսների այդ շրջակայքում և այլն, Նա պետք է իրենց անունները ասեր, թե ով են նրանք, տառ առ տառ ասեր դա նրանց լեզվով: Հենց որ տառ առ տառ ասվում էր, նրանք, նրանք իմանում էին, թե ինչ անուն է եղել: Բայց տեսնում եք, Նա գիտի բոլոր լեզուները: Նա Հավիտենական Աստված է:

207 Եկե՛ք այսօր սկսենք, ասենք, յոթանասունհինգից մինչև հարյուրը, Օ-ով սկսվող: Արդյո՞ք Օ դա այն էր, ինչ նա ասած: Ես...[Ինչ-որ մի եղբայր ասում է. «Այո, Օ-ն է»: Ծան. Խմբ.]: Օ, Օ: Այո: Լավ: Տեսնենք, թե ո՞ւմ մոտ է 75 աղոթքի թերթիկը: Օ-ով, աղոթքի թերթիկ Օ, յոթանասունհինգ, բարձրացրե՛ք ձեր ձեռքը, ում մոտ էլ որ լինի: Օ-ի: Լավ: Մոտեցե՛ք այստեղ: Յոթանասունհինգ, ութուն, ութունհինգ, իննսուն, իննսունհինգ և հարյուր համարներն ունեցողները, խնդրում եմ, եկե՛ք այս կողմ: Լավ, դա, արագ շարվեք այստեղ, որովհետև ժամանակ չենք ունենա: Հուսով եմ, որ դուք դա կանեք:

208 Նայե՛ք ձեր աղոթքի թերթիկին: Նայե՛ք ձեր կողքինի աղոթքի թերթիկին: Ո՞ր...Եվ եթե ինչ-որ մեկը հաշմանդամ է, ապա բերեք նրանց աղոթքի շարքի մեջ: Եթե նրանց մոտ Օ թերթիկ է, միայն Օ-ն, յոթանասուն...

209 Յոթանասունհինգից մինչև հարյուր թերթիկներ ունեցողները, խնդրում եմ թող շարվեն այստեղ: Որտեղ էլ որ լինեք՝ շքամուտքներում, էլի ինչ-որ տեղ, իջեք և որքան հնարավոր է արագ մտեք շարքի մեջ, ժամանակը խնայելու համար:

210 Հիմա այստեղ մնացածները, ովքեր աղոթքի թերթիկ չունեն, չէ՞իք բարձացնի ձեր ձեռքը և ասի. «Բրանհամ եղբայր, ես աղոթքի թերթիկ չունեմ, բայց հավատում եմ»: Բարձրացրե՛ք ձեր ձեռքերը:

211 Հիմա հիշե՛ք, ես ձեզ հետ խոսելու եմ Քահանայապետի մասին: «Նա Քահանայապետ է, ում

կարող ենք դիպչել մեր տկարությունների զգացումով»: Եւ *Եհովա Յիրենն* է՝ «Տերը կհայթայթի ողջակեզ»: Եւ *Եհովա-Ռաֆան* է՝ «Տերը, որ բժշկում է քո բոլոր հիվանդությունները»: Հավատո՞ւմ եք դրան: Եւ *Եհովա-Սամասեն* է: *Պաշտպանը, վահանը* և մեր *խաղաղությունը*: Եւ դէռ է: Լավ, քանի՞սն են հավատում, որ Եհովայի բոլոր այդ փրկագնող անունները վերաբերում էին Հիսուսին: Անկասկած, Եւ պետք է լինէր: Եթէ Եւ, եթէ Եւ...Չէ՞ որ դրանք անբաժան են, ուստի Եւ պետք է լինէր դրանք բոլորը: Եվ եթէ Եւ դէռ Եհովա-Յիրենն է, որեւէ Եհովա-Ռաֆան էլ է: Եթէ Եւ Եհովա-Յիրենն է...Եւ *Եհովա-Յիրենն* է, որը նշանակում է «Աստված կհայթայթի ողջակեզ փրկության համար», ուրեւէ Եւ *Եհովա-Ռաֆան էլ է*, որ «բժշկում է քո բոլոր հիվանդությունները»: Ամեն: Բժշկությունը կարող է գալ միայն Աստծուց:

212 Լավ, մինչ մարդիկ շարվում են. եւ ժամանակ չունեն տեսնելու, թե ովքե՞ր և ի՞նչ են նրանք: Բայց հիմա բոլորն այնտեղ, ովքեր գիտեն, որ եւ ձեզ չեմ ճանաչում, բարձրացրեք ձեր ձեռքը և ասեք. «Եւ Աստծո կարիքն ունեմ: Բայց դուք ինձ չեք ճանաչում, Բրանհամ եղբայր, սակայն եւ Աստծո կարիքն ունեմ: Եւ պարզապէս կբարձացնեմ իմ ձեռքը»:

213 Հիմա, եթէ դուք միայն մի քանի բռայելով հանդարտվեք, հեռուեք, ուշադիր լինեք, լուռ նստեք: Հիմա, «լուռ նստեք» ասելով, եւ ի նկատի չունեմ...Եթէ Տերն ինչ-որ բան անի, դուք կուզենաք փառք տալ Տիրոջը. դա փառաբանությունն է: Բայց եւ ինչ ի նկատի ունեմ «չվագել, վեր չկենալ», դուք գիտեք, դա հարգալից չէ: Հասկանո՞ւմ եք: Եվ Սուրբ Հոգին շատ նուրբ է, շատ նուրբ է: Հասկանո՞ւմ եք: Պարզապէս ցանկացած նման բան, ուղղակի լքում է ինձ, իսկ հետո եւ կրկին ստիպված եմ լինում պայքարել, հասկանում եք: Բայց եթէ դուք լսե՛ք:

214 Հիշո՞ւմ եք Նրա առաջին խոստումը: «Արա այնպէս, որ մարդիկ քեզ հավատան, բացի այդ, եղի՛ր անկեղծ, այդժամ ոչինչ չի կանգնի քո աղոթքի առջև»: Հիշո՞ւմ եք դա: Դա ճիշտ է: Եվ դա...Եւ դէռ չեմ տեսել, որ դա ձախողվի, և չի էլ ձախողվելու: Սա Աստված է:

215 Մենք հիմա կարագացնենք աղոթքի շարքը, որպեսզի հնարավորինս շատ քանակով ժողովուրդ անցնի: Բայց նրանք, ովքեր ունեն աղոթքի թերթիկներ, սակայն չեն

կանչվել այսօր, պահեք ձեր թերթիկները, մենք ձեզ կկանչենք: Լավ:

216 Հիմա նրանք, ովքեր առանց աղոթքի թերթիկի են, հիշե՛ք, այսինքն՝ նրանք, ովքեր այնտեղ եք, ունեք աղոթքի թերթիկներ, թե ոչ, պարզապես հավատացե՛ք, որ Նա Եղբայրյեցիս 4-րդ գլխի գրվածի պես, այստեղ է: «Նա Քահանայապետն է, որին կարող ենք դիպչել մեր տկարությունների զգացումով»: Տեսե՛ք, եթե Նա մնում է... Տեսե՛ք, եթե Եհովան Իրեն ներկայացրել է Իր ժողորդի մեջ, ինչպես որ արել է Սողոմի ժամանակ: Լավ:

217 Լավ, պարո՛ն: Այժմ եկե՛ք աղոթենք, իսկապես եղեք ակնածալից: Հիմա հիշե՛ք, Աստծո մի Խոսքն ավելին է, քան ցանկացած մեկը կարող է ասել: Հիմա, այս տղամարդը, որ այստեղ է, ես, ես նրան չեմ ճանաչում: Եվ ենթադրում եմ նա... Դուք ինձ անծանոթ եք, չե՞, պարոն: [Եղբայրն ասում է. «Այո»: Ծան. Խմբ.]: Դուք անծանոթ եք: Մենք գիտեք մի բան, որ երկուսս էլ մի օր կանգնելու ենք Աստծո ներկայության մեջ. որպես մարդ մենք հանդիպելու ենք Այնտեղ: Մա մեր առաջին հանդիպումն է:

218 Հիմա եթե դուք եկել եք այստեղ, եթե հիվանդ եք, ես չգիտեմ. դա կարող է մեկ այլ բան լինել, հասկանում եք: Բայց եթե ես, եթե ես ձեռքերս դնեի ձեր վրա և ասեի. «Փառք տվեք Տիրոջը: Գնացե՛ք և եղեք առողջ»: Դա նորմալ է: Դուք կկարողանայիք դրան հավատալ: Բայց ի՞նչ կլինի, եթե Նա ձեզ ասի, թե ինչն այն չէ ձեզ մոտ: Հիմա, հասկանում եք, դա այլ է, այդժամ դուք գիտեք, որ դա ցույց է տալիս Նրա բնութագիրը: Հասկանում եք, դա իմ հատկանիշը չէր լինի: Ես մարդ եմ, ես ոչինչ չեի կարող իմանալ նրա մասին: Ես հենց նոր նրան ասացի «ես ձեզ չեմ ճանաչում»: Նա էլ ինձ չի ճանաչում: Բայց ի՞նչ էր դա անելու: Դա ցույց էր տալու Հիսուս Քրիստոսի բնութագիրը, Ով նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Իմանալով, որ դա ես չեի կարող լինել, ես չեի կարող լինել, որովհետև ես այդ մարդուն չեմ ճանաչում: Ես կբարձացնեմ իմ ձեռքը. *ահա* Խոսքը: Հասկանո՞ւմ եք: Ես չեմ ճանաչում նրան: Նա էլ ինձ չի ճանաչում: Բայց Հիսուս Քրիստոսի հատկանիշը...

219 Եթե Հիսուսն այստեղ կանգնած լիներ, իսկ նա հիվանդ է, ու եթե նա ասեր. «Տե՛ր Հիսուս բժշկի՛ր ինձ»: Ի՞նչ կասեր Հիսուսը նրան: «Ես արդեն դա արել եմ»: Ճի՞շտ է:

220 «Նա մեր մեղքերի համար վիրավորվեց. Նրա վերքերով մենք բժշկվեցինք»: Ողջ փրկագնումը, որը մենք երբևէ կարող ենք ունենալ կատարվեց Գողգոթայի վրա: Այդ ժամանակից ի վեր հավատքն է՝ հավատալ ավարտված գործին: Դա ճիշտ է: Լավ:

221 Հիմա, եթե Հիսուսը կենդանի է հիմա, և ես խոսում էի Նրա Խոսքի...Ահա, խնդրեմ, վերադարձե՛ք այդ պարզության ու հավատքին՝ հավատալով Նրա Խոսքին: Երբ այն երեկո Նա ինձ հանդիպեց, ասաց. «Կլինի այնպես, որ դու նույնիսկ կիմանաս նրանց սրտի գաղտնիքները: Եթե ձեռքի այդ առաջին նշանին չհավատան, ստիպված կլինեն այս մեկին հավատալ»: Հասկանո՞ւմ եք: «Եթե նրանք չեն հավատում դրան, այդ ժամանակ արյունն անիծում է երկիրը»:

222 Ճիշտ այնպես, ինչպես Մովսեսի ժամանակ էր: Ասաց. «Եթե այդ երկու նշաններին չհավատան, այդ ժամանակ թափի՛ր արյունը գետնի վրա», հասկանում եք, «թափի՛ր ջուրը գետնի վրա, այն արյուն կդառնա»:

223 Հիմա ընդամենը պարզելու համար. եթե ես կարողանայի տեսնել, թե ինչում է ձեր խնդիրը, դա բավական կլիներ և կմղեր ձեզ հավատալու, այդպես չէ՞: [Եղբայրն ասում է. «Անշուշտ»: Ծան. Խմբ.]: Գիտեք, որ դա կլիներ այդ Անձնավորության՝ Հիսուս Քրիստոսի բնութագիրը, որի մասին ես խոսում էի:

224 Այս տղամարդը, հենց որ ես նայեցի նրան, ետ է քաշվում: Նրա վրա ստվեր կա: Չկա մի միջոց, որով բշկությունը կարողանար օգնել նրան: Նա մահամերձ վիճակում է: Դա ճիշտ է: Նա վիրահատություն է տարել, և այդ վիրահատությունը հյուծիչ է եղել: Դա քաղցկեղ է, և այն տարածված է ձեր ողջ մարմնով: Եթե դա ճիշտ է, բարձրացրե՛ք ձեր ձեռքը: Միայն Աստված կարող է նրան բժշկել: Բայց տեսե՛ք, ես ուզում եմ ձեզ մի բան ասել, պարոն: Այդ դևը կարող է թաքնվել բժշկի դանակից, բայց նա չի կարող թաքնվել Աստծուց: Հավատո՞ւմ եք դրան: Հավատո՞ւմ եք դրան: Ուրեմն՝ աղոթում եմ Հիսուս Քրիստոսի Անունով, թող դա հեռանա նրանից, թող այս մարդն ապրի: Ոչինչ, պարզապես թույլացել է: Լավ:

225 Մենք իրար անձանոթ ենք, տղամարդը և կինը հանդիպել են: Հիմա, որպես տղամարդ ես ձեզ չեմ ճանաչում: Եվ, հավանաբար, որպես կին, դուք էլ ինձ չեք ճանաչում. ոչ ավելին, քան, դուք տեսել եք իմ անունը, կամ նկարը, կամ նման մի բան: Բայց մենք

իրար չենք ճանաչում: Դրանք մեր բնութագրերն են: Մենք չգիտենք մեկս մյուսի բնավորությունը: Բայց Քրիստոսի հատկանիշը, Նա Խոսքն է, և Խոսքը խոստացված է այս օրվա համար: Լսել եք, թե ինչպես էի խոսում դրա մասին: Ուրեմն Նրա հատկանիշները դրսևորելու են Նրան այստեղ: Ոչ թե ես եմ դրսևորելու Նրան: Ես նրան չեն ճանաչում: Հասկանում եք: Մեր, մեր եկեղեցին հասկանում է դա: [Եկեղեցին ասում է. «Ամեն»: Ծան. Խմբ.]: Տեսնում եք: Ես, ես մարդ եմ: Ես քնդամենը ձեր եղբայրն եմ:

²²⁶ Ջրհորի մոտ կանգնած կնոջ պես, ասել մի բան, որն այնպես չէ, ասել մի բան, ինչն այնպես չէ ձեզ մոտ, կամ թե ինչ եք ուզում, կամ ինչի համար եք այստեղ: Թող Աստված լինի դրա Դատավորը: Դուք տառապում եք սակավարյունության պատճառով: Ճիշտ է, չէ՞: [Քույրիկն ասում է. «Այո»: Ծան. Խմբ.]:

²²⁷ Ես, ես անընդհատ բախվում եմ դրան, ինչ-որ մեկը կարծում է, թե ես գուշակեցի դա: Ես դա չեմ գուշակում: Ո՛չ: Ժամանակ առ ժամանակ գգում եմ դա, ինչ-որ մեկն է: Դուք չեք կարող թաքցնել ձեր մտքերը հիմա: Դա մոտավորապես այդ կողմերում է, ես գիտեմ, այստեղ երկու թունդ թերահավատներ են նստած: Տեսնում եք: Դրա համար հիշե՛ք հիմա, ես նաև կարող եմ ասել ձեր անունները, Աստված կարող է, ուստի դադարեք այդպես մտածել: Թույլ տվեք ցույց տալ ձեզ:

²²⁸ Նայե՛ք այստեղ, տիկին: Նայե՛ք ինձ: Ես չգիտեմ, թե Ինքն ինչ ասաց ձեզ, բայց ես գիտեմ, թե ով է Նա: Եվ դա Նրա դրսևորված հատկանիշն է: Այո, դա սակավարյունություն է, արյուն, ջուր:

²²⁹ Հիմա, այստեղ, այստեղ մի բան կա: Տեսնենք, եթե նրանք կարծում են, թե սա գուշակություն է: Աղոթում եք երեխայի համար, որ այստեղ է: Դա ճիշտ է: Դա գտնվում է նրա կոկորդում՝ նշագեղձեր, աղեսնդիղներ: Դա արդեն վիրահատություն է պահանջում: Ճիշտ չէ՞: [Քույրիկն ասում է. «Այո»: Ծան. Խմբ.]: Վերցրեք այդ թաշկինակը, դրեք դրա վրա և հավատացեք: Մի՛ կասկածեք: Վիրահատության կարիք չի լինի: Հավատացեք հիմա ձեր ողջ սրտով:

²³⁰ Բարև ձեզ: Բանն այն է, այս կնոջ համար, որ այստեղ է, որ դուք ինչ-որ բանից վախենում եք: Վախենում եք, որ խալը վերածվելու է քաղցկեղի: Ուհիու: Այժմ գնացեք՝ հավատալով, և դա այդպես չի լինի: Պարզապես գնացեք՝

հավատալով ձեր ողջ սրտով: Հատկանիշներն իմը չեն, Երանն են:

²³¹ Հավատո՞ւմ եք հիմա: Դա պետք է մղի բոլորին հավատալու:

²³² Հիմա, ես ձեզ չեմ ճանաչում: Ես ձեզ անծանոթ եմ: Բայց Աստված ճանաչում է ձեզ: Հավատո՞ւմ եք, որ...Դուք գիտեք, որ ես ձեզ չեմ ճանաչում, գիտեք նաև, որ դուք էլ ինձ չեք ճանաչում, ուստի հավատո՞ւմ եք, որ այս խոսող Հոգին իմ հոգին չի կարող լինել: Որովհետև ես որպես մարդ չեմ ճանաչում ձեզ: Բայց խոստացված Խոսքի հատկանիշը Խոսքն է, որը երկսայրի սրից ավելի կտրուկ է, և զանազանում է սրտի մտքերն ու խորհուրդները:

²³³ Դուք խիստ հիվանդ եք: Ունեցել եք կանացի հիվանդություն, այսինքն՝ արգանդը և արգանդում քաղցկեղ կար: Գնացել և ինչ-որ մի տեսակ բուժում եք ստացել, դա ռադիումով բուժում է եղել, և միակ բանը, ինչին դա հանգեցրել է, այն է՝ տարածվել է ձեր ամբողջ մարմնով: Եվ դուք, դուք կմեռնեք, եթե Աստված ձեզ չբժշկի: Դա այդպես է: Հավատո՞ւմ եք հիմա, որ Ես բժշկելու է ձեզ: [Քույրիկն ասում է. «Այո»: Ծան. Խմբ.]: Թող Երկնային Աստվածը հանդիմանի այդ դեկն, որը թաքնվել է բժշկից: Ես կարող է թաքնվել ռադիումից, բայց ոչ Սուրբ Հոգուց: Գնացեք և հավատացեք Երան հիմա, քույր: Բնավ մի՛ կասկածեք, այլ հավատացե՛ք:

²³⁴ Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է բժշկել այդ ասթմատիկ վիճակը, և ձեզ առողջացնել: [Եղբայրն ասում է. «Այո»: Ծան. Խմբ.]: Հավատո՞ւմ եք: Ուրեմն շարունակեք ձեր ճանապարհը՝ ուրախանալով և ասելով. «Ծնորհակաություն Տեր: Ես հավատում եմ, որ իմ ասթման անցավ»:

²³⁵ Բարև ձեզ: Դուք նյարդային եք: Երկար ժամանակ է նյարդային եք: Դա հանգեցրել է ստամոքսի խոցի, ինչի պատճառով էլ դուք, ձեր ստամոքսը ցավում է: Եվ դուք ուզում եք...Ուզո՞ւմ եք ուտել ձեր ընթրիքը: Կանե՞ք այն, ինչ ձեզ ասեմ: Գնացեք, ընթրեք Տեր Հիսուսի Անունով:

²³⁶ Հավատո՞ւմ եք ձեր ողջ սրտով: [Քույրիկն ասում է. «Այո»: Ծան. Խմբ.]: Դուք կարծես թե շատ հիանալի երիտասարդ տիկին եք: Հավատո՞ւմ եք, որ ես Երա ծառան եմ: [«Ամեն»]: Հավատո՞ւմ եք, որ Երա հատկանիշը կարող էր լինել այստեղ, որ...Խոսքը՝ Ինքը և այս օրվա խոստումը՝ «Այս գործերը, որ Ես անում եմ,

դուք էլ կանեք»: [«Ամեն»]: Ես չեմ կարող բժշկել: Նա արդեն արել է դա, բայց Նրա հատկանիշը դրսևորում է Իրեն, կարող է ասել, թե ինչը ձեզ մոտ այն չէ: Դուք կանացի խնդիր ունեք, կանացի խնդիր: [«Այո՛, պարոն»]: Հավատո՞ւմ եք, որ Աստված հիմա կբժշկում է դա: [«Այո: Ամեն»]: Ծարունակե՛ք ձեր ճանապարհը, դա այլևս ձեզ չի անհագստացնի: Հավատացե՛ք ձեր ողջ սրտով:

237 Հավատո՞ւմ եք, որ ես Նրա ծառան եմ: [Քույրիկն ասում է. «Այո՛, պարոն»: Ծան. Խմբ.]: Եթե Աստված ինձ ասի, թե ինչ խնդիր ունեք, կհավատա՞ք, որ սա Հիսուս Քրիստոսի հատկանիշն է: Խնդիրը ձեր ողնաշարի հետ է: Այն էլ չկա: Գնացեք, հավատացեք ձեր ողջ սրտով: Հավատացե՛ք:

238 Եկե՛ք, տիկին: Դուք նույնպես ստամոքսի խնդիր ունեք: Հավատացե՛ք ձեր ողջ սրտով և գնացե՛ք ընթրեք: Մոռացե՛ք դրա մասին: Հիսուս Քրիստոսը բժշկում է ձեզ:

239 Եկե՛ք: Դուք խնդիր ունեք արյան հետ: Ծաքարախտ եք: Հավատո՞ւմ եք, որ Աստված առողջացնելու է և բժշկելու է ձեզ դրանից: Ծարունակեք ձեր ճանապարհը և ասեք. «Ծնորհակալություն, Տե՛ր Հիսուս», բժշկում է ձեզ: Գնացեք և հավատացեք ձեր ողջ սրտով:

240 Եկե՛ք: Ձեր մեջքն է, հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է մեջքը բժշկել և ձեզ առողջացնել: Ծարունակեք ձեր ճանապարհը և ուրախացե՛ք՝ ասելով. «Ծնորհակալություն, Տե՛ր Հիսուս»:

241 Ձեզ մոտ նույնպես ինչ-որ մի բան այն չէ մեջքի հետ: Պարզապես գնացեք առաջ՝ ասելով. «Ծնորհակալություն, Տե՛ր: Ես բժշկված եմ»: Հավատացե՛ք դրան ձեր ողջ սրտով:

242 Դուք նույնպես մեջքի խնդիր ունեիք: Ի՞նչ գիտեք դրա մասին: Հավատացե՛ք ձեր ողջ սրտով հիմա, շարունակե՛ք ձեր ճանապարհը և եղե՛ք առողջ: Հավատացե՛ք, որ Քրիստոսը բժշկում է ձեզ: «Եթե կարող եք հավատալ, ամեն բան հնարավոր է»: Լավ:

243 Ի՞նչ կլինեք, եթե ես ձեզ ոչինչ չասեի, պարզապես անցնեի կողքով և ձեռքերս դնեի նրա վրա. հավատո՞ւմ եք, որ նա կբժշկվեր: Նրանք տեսնում են, թե ինչն այն չէ: Հավատո՞ւմ եք, որ նա կբժշկվեր: Եկե՛ք այստեղ: Հիսուս Քրիստոսի Անունով ես վրնդում եմ այս դևին: Թող Աստծո գործությունը բժշկի այս երեխային: Ամեն: Մի՛ կասկածեք,

քնավ մի՛ կասկածեք, և նա կառողջանա: Հավատացե՛ք ձեր ողջ սրտով:

244 Եթե Աստված ձեզ չբժշկի, մի օր հողաբորբով կհայտնվեք հենակների վրա: Բայց դուք հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է բժշկել հողաբորբը: Ուրեմն գնացեք և ասեք. «Շնորհակալություն, Տե՛ր: Ես կհավատամ Քեզ, և Դու կբժշկես ինձ»: Լավ:

245 Եկե՛ք հիմա: Դա իսկապես ձեր տարիքն է: Դուք շատ եք նյարդայնանում: Նյարդայնանում եք երեկոյան ուշ ժամերին: Աշխատելիս և այլն, դուք իսկապես շատ եք նյարդայնանում: Հավատո՞ւմ եք հիմա: Ուրեմն դա այլևս ձեզ չի անհանգստացնի: Ծարունակեք ձեր ճանապարհ՝ ասելով. «Շնորհակալություն, Տե՛ր Հիսուս»:

246 Եկե՛ք, պարոն: Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է բժշկել սրտի հիվանդությունները: [Եղբայրն ասում է. «Այո»: Ծան. Խմբ.]: Բժշկելո՞ւ է ձեր սիրտը: Պարզապես շարունակեք շարժվել՝ ասելով. «Շնորհակալություն, Տե՛ր: Ես հավատում եմ իմ ողջ սրտով»:

247 Աստված կարող է բժշկել թոքախտը, ինչպես նաև առողջացնել: Հավատո՞ւմ եք դրան ձեր ողջ սիրտով, պարոն: [Եղբայրն ասում է. «Ես հավատում եմ դրան»։ Ծան. Խմբ.]: Լավ: Ծարունակե՛ք ձեր ճանապարհն և ուրախացե՛ք՝ ասելով. «Շնորհակալություն, Տե՛ր Հիսուս»:

248 Ի՞նչ կասեք ձեր մասին այնտեղ, հավատո՞ւմ եք: Իսկ ի՞նչ կասի լսարանը: Լսարանում ձեզանից ոմանք հիմա հավատացե՛ք:

249 Այս տղամարդը, որ բրոնխիտով հիմա նստած է այստեղ, հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է բժշկել բրոնխիտը: Ծատ լավ, ուրեմն կարող եք ստանալ այն, ինչ խնդրեցիք: Ամեն:

250 Արյան քարձր ճնշում է, նստած է անմիջապես այնտեղ նրա հետևում: Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է բժշկել արյան քարձր ճնշումը: Այն հեռացավ ձեզանից, պարոն: Ես չեմ ճանաչում նրան, կյաքում երբեք չեմ տեսել նրան:


251 Ասացե՛ք, պարո՛ն, դուք հավատո՞ւմ եք, որ այդ մկանային կծկումները, նյարդերի կծկումները մկաներում, հավատո՞ւմ եք, որ Աստված բժշկելու է դա: Հավատո՞ւմ եք: Բարձրացրե՛ք ձեր ձեռքը, եթե հավատում եք: Լավ:

²⁵² Ձեր կինը նստած է այնտեղ, նրան անհանգստացնում է սինուսի հիվանդությունը: Դուք նույնպես հավատո՞ւմ եք, որ դա կհեռանա ձեզանից, քույր:

²⁵³ Ամմիջապես մեր հետևում՝ այնտեղ նստած մի կին, նյարդի բորբոքում ունի: Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է բժշկել նյարդի բորբոքումը, տիկին:

²⁵⁴ Ահա վերարկույով մի տիկին է, կարմիր վերակույով, այստեղ: Նա նստած է այնտեղ: Նա նույնպես սինուս ունի: Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է բժշկել սինուսը: Բարձրացրե՛ք ձեր ձեռքը, եթե հավատում եք դրան:

²⁵⁵ Ցանկացած ոք այստեղ, ով հավատում է, որ Հիսուս Քրիստոսի հատկանիշները մեր մեջ են այս երեկո, բարձրացրեք ձեր ձեռքը և ասեք. «Ես հավատում եմ դրան»: [Եկեղեցին ասում է. «Ես հավատում եմ դրան»: Ծան. Խմբ.]:

²⁵⁶ Բոլորը, ովքեր այստեղ են, ընդունե՛ք Նրան որպես ձեր Բժիշկը, կանգնեք և ասեք. «Ես հավատում եմ դրան»: Կանգնե՛ք: Վեր կացե՛ք ձեր աթոռներից, ինչ էլ որ դա լինի: Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Ես շնորհում եմ դա ձեզ Տեր Աստծո Անունով: 

64-0320 Աստված Իրեն Նույնացնում է Իր Բնութագրերով
Դենհամ Սփրինգսի միջնակարգ դպրոց
Դենհամ Սփրինգս, Լուիզիանա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

VOICE OF GOD RECORDINGS
P.O. Box 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. Box 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org